ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ ԷՄԻԼ ՀՐԱՉՅԱՅԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԷՎՈԼՅՈՒՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

ԻԳ.00.02 - «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արթուր Երվանդի Մկրտիչյան

քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արթուր Վլադիմիրի Աթանեսյան

քաղ. գիտ. դոկտոր, դոցենտ
Աշոտ Սեյրանի Ալեքսանյան

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվ. հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2020թ. հուլիսի 24-ին ժամը 13:00-ին ՀՀ ԲՈԿ-ի 056 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ ք. Երևան, Ա. Մանուկյանի 1):
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է հունիսի 13-ին:

056 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
պատմ .գիտ. թեկն., դոցենտ Վ.Ս. Պետրոսյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից աշխարհում հասարակական և քաղաքական կյանքի ոլորտներում տեղի ունեցող տարբեր փոխակերպումներն իրենց ուրույն ներգործությունն ունեն քաղաքական գործընթացների նախաձեռնման, մշակման, իրականացման և գնահատման գործում: Փոփոխվող աշխարհում, մասնավորապես 21-րդ դարի տեղեկատվական լայնամասշտաբ հոսքերի ներքո, քաղաքական գործընթացներն ավելի հագեցած են դառնում նոր տեխնոլոգիաներով, իրականացման գործիքներով, մեթոդներով և մեխանիզմներով, որոնք իրենց ուղղակի կամ անուղղակի ազդեցությունն են թողնում տարբեր հասարակությունների քաղաքական մշակույթների ձևավորման, արդիականացման և փոխակերպման վրա: Այս տեսանկյունից քաղաքական գործընթացի ձևավորմանը և զարգացմանը զուգահեռ արդիական է դառնում քաղաքական մշակույթի համապատասխան փոխակերպումների և առանձնահատկությունների ուսումնասիրությունը ստույգ պետությունների առանձին դեպքերում, մասնավորապես՝ հետխորհրդային շրջանում, որտեղ քաղաքական և հասարակական համակարգերի տրանսֆորմացիան, ընդհանուր իմաստով, հանգեցրել է միանգամայն տարբերվող և առանձնահատուկ քաղաքական իրավիճակի, որն աչքի է ընկնում իր բազմավեկտոր բնույթով:

Հետխորհրդային տարաբնույթ փոխակերպումները, անխուսափելիորեն, ներգործում են նաև հայ հասարակության քաղաքական իրականության վրա՝ առաջացնելով քաղաքական երևույթների ուսումնասիրության նոր գիտական պահանջ, որի շրջանակներում իր կարևոր դերն ու նշանակությունն ունի քաղաքական մշակույթը:

Ակնհայտ է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո քաղաքական համակարգի վերափոխությանը զուգահեռ որոշակի փոխակերպումների պետք է ենթարկվեր նաև հետխորհրդային հասարակությունների քաղաքական մշակույթը: Իհարկե, ի սկզբանե ենթադրվում էր, որ խորհրդային ժառանգություն ունեցող երկրներում իներցիոն բնույթով պետք է պահպանվեին ընդհանրությունները քաղաքական մշակույթում: Սակայն հետխորհրդային շրջանի քաղաքական գործընթացի արդեն առաջին արդյունքները ցույց տվեցին, որ հետխորհրդային տրանսֆորմացիան ունի ոչ թե գծային և միասնական, այլ բազմավեկտոր և տարբեր երկրների դեպքում միմյանցից տարբերվող զարգացումներ:

Հետազոտական թեմայի արդիականությունը մեծապես պայմանավորված է նաև հետխորհրդային երկրներում քաղաքական գործընթացների և քաղաքական մշակույթի ոչ միագիծ զարգացման հանգամանքներով: Դիտարկելով քաղաքական մշակույթը որպես քաղաքական համակարգի

տարր և քաղաքական գործընթացների արդյունք՝ վերջինիս ուսումնասիրության վերաբերյալ տեսական և մեթոդաբանական մոտեցումների վերլուծությունը դառնում է արդիական և անհրաժեշտ քաղաքագիտական խնդիր: Քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը որպես քաղաքական համակարգի արդյունավետության առանցքային տարր՝ հնարավորություն է տալիս բացահայտել նրա էությունը և բովանդակությունը, ինչպես նաև բնութագրել քաղաքական մշակույթը որպես քաղաքական գործընթացների զարգացման կայուն գործոն՝ հիմնվելով մեծապես գործածվող քաղաքական խոսույթի հետազոտության և վերլուծության վրա:

Հետազոտության համար հիմք է ծառայել «քաղաքական մշակույթ-քաղաքական գործընթաց-քաղաքական խոսույթ» գիտակարգերի դիտարկումը եռամիասնության և փոխակապակցվածության մեջ:

Հետխորհրդային ՀՀ-ում քաղաքական խոսույթի վերլուծության միջոցով քաղաքական մշակույթի ձևավորման և զարգացման միտումների, փոխակերպումների, ինչպես նաև քաղաքական գործընթացների և ինստիտուտների վրա դրանց ազդեցությունների համալիր ուսումնասիրությունը ևս հիմնավորում է սույն հետազոտության արդիականությունը և գիտական անհրաժեշտությունը:

Քաղաքական մշակույթը ոչ միայն հասարակական գիտակցության ձևավորման կարևորագույն տարրերից մեկն է, այլ այն նաև ազգային ինքնության, հայկական պետության միասնականության ձևավորման արժեհամակարգ է, քանի որ դրա ազդեցությունը պետական համակարգի և քաղաքացիական կյանքի բոլոր ոլորտների վրա բավականին մեծ է:

Քաղաքական մշակույթի հետազոտությունը՝ որպես հայաստանյան քաղաքական գործընթացները պայմանավորող գործոններից մեկը, թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես կատարել քաղաքական բարեփոխումներ և մշակել պետության զարգացման ռազմավարություններ՝ հիմնվելով հայ ժողովրդի մշակութային և քաղաքակրթական ինքնության վրա:

Հետազոտական թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ՀՀ-ում քաղաքական գործընթացի բազմամակարդակ բնույթով, որի վրա ազդում են տարբեր գործոններ, որոնց շարքում քաղաքական մշակույթը և քաղաքական խոսույթն ունեն առանցքային նշանակություն: Որպես քաղաքական համակարգի բաղադրիչ՝ քաղաքական մշակույթը ՀՀ-ում մեծապես ազդում է քաղաքական գործընթացի էության, ինչպես նաև դրա մասնակիցների արժեքաբանական և իմաստաբանական բնութագրիչների վրա:

<u>Թեմայի գիտական մշակվածության աստիճանը:</u> Սույն ատենախոսության գիտական մշակվածության աստիճանը պայմանավորված է քաղաքական մշակույթի, քաղաքական գործընթացի և քաղաքական

խոսույթի վերաբերյալ համապատասխան գիտական հետազոտությունների սինթեզով: Չնայած այն բանին, որ «քաղաքական մշակույթ» եզրույթը գիտական շրջանառության մեջ է դրվել դեռևս 18-րդ դարում գերմանացի փիլիսոփա Յ. Հերդերի կողմից «Գաղափարներ մարդու պատմության փիլիսոփայության մասին» աշխատանքում՝ այն քաղաքագիտության մեջ սկսել է լայնորեն կիրառվել միայն 20-րդ դարի կեսերից, մասնավորապես արևմտյան քաղաքական մտքի ներկայացուցիչների աշխատություններում: Հարկ է նշել, որ քաղաքական մշակույթը՝ որպես քաղաքագիտական գիտակարգ, խորապես ուսումնասիրվել է արևմտյան հետազոտողների կողմից: Քաղաքական մշակույթի տեսության և հայեցակարգային հիմքերի մշակման գործում մեծ ներդրում ունեն հետազոտողներ Գ. Ալմոնդը, Ս. Վերբան, Ե. Վյատրը, Կ. Ֆեները, Ռ. Մաքրիդիսը, Դ. Էլազարը, Ս. Բիրը, Ա. Ուլամը, Պ. Շարանը, Ս. Լիպսեթը, Ա. Լեյփհարթը, Ջ. Մարչը, Ջ. Օլսենը, Ռ. ԴեԼեոնը, Ք. Նաֆը, Բ. Սիլվերը, Կ. Դաուլին, Է. Դրանը, ՈՒ. Ռոզենբաումը, Մ. Կաազեն, Ռ. Ինգլհարտը, Վ. Վուժչիչը և այլք, ովքեր իրենց աշխատանքներում ուսումնասիրել են քաղաքական մշակույթի ինչպես տեսական, այնպես էլ մեթոդաբանական և գործնական խնդիրներ: Վերը նշված հեղինակների աշխատանքների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ նրանք մեծապես կարևորել են քաղաքական մշակույթի հետազոտության վարքաբանական, սուբյեկտիվիստական, ինտերպրետացիոն, ճանաչողական, ինստիտուցիոնալ, համեմատական, ինչպես նաև արժեքային, համակարգային, հաղորդակցական և վարչակարգային մոտեցումները:

Ինչ վերաբերում է հետխորհրդային տարածքում քաղաքական մշակույթի, տարածաշրջանային հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնասիրություններին, ապա հարկ է առանձնացնել Ե. Մորոզովայի, Վ. Կրավչենկոյի, Է. Բատալովի, Մ. Ստրեժենևայի, Վ. Զիմինի, Հ. Գևորգյանի, Գ. Քեռյանի, Մ. Մարգարյանի, Ա. Մարգարովի, Տ. Թորոսյանի, Լ. Շիրինյանի, Հ. Քոթանջյանի, Գ. Պողոսյանի, Տ. Քոչարյանի, Խ. Գալստյանի, Ա. Ենգոյանի, ինչպես նաև Ա. Ալեքսանյանի, Է. Օրդուխանյանի, Հ. Սուքիասյանի աշխատանքները, որտեղ քաղաքական մշակույթի ձևավորման, փոխակերպման և զարգացման, ինչպես նաև դրա առանձին տարրերի և բաղկացուցիչների մասին խնդիրները հիմնականում դիտարկվում են հետխորհրդային տրանսֆորմացիայի, անցումազիտության և արդիականացման գործընթացի համատեքստում:

Քաղաքական գործընթացի հիմնախնդրի ուսումնասիրության տեսանկյունից սույն աշխատանքում առանձնակի կարևորվել են Դ. Իսթոնի, Ս. Հանթինգթոնի, Ն. Քարենի, Մ. Օլսոնի, Ջ. ՄքՔարտի, Ֆ. Փիվենի, Ռ. Քլոուարդի, Չ. Թիլի, Դ. ՄքԱդամի, Ս. Թարրոուի, Ջ. Գուդվինի, Ջ. Ջասպերի, ինչպես նաև Ա. Դեկտյարևի, Ե. Մելեշկինայի, Ա. Շուտովի, Բ. Իսաևի, Ա. Սոլովևի հետազոտությունները, որտեղ վերլուծության են են-

թարկվում քաղաքական գործընթացի տեսական մոտեցումները: Իսկ որպես քաղաքական գործընթացի հետազոտության մեթոդաբանական հիմք՝ կարևորվել են Չ. Մերիամի, Օ. Միտրոշենկովի, Ն. Բարանովի, Գ. Պիկալովի, Տ. Պարսոնսի, Ռ. Դարենդորֆի, Լ. Գումպլովիչի, Է. Դյուրկհեյմի, Վ. Պարետոյի, Գ. Լեբոնի աշխատությունները:

Քաղաքական խոսույթի տեսական, մեթոդաբանական հիմքերի, դրսևորման ձևերի, տիպաբանության, ինչպես նաև վարչակարգային առանձնահատկությունների, քաղաքական մշակույթի և քաղաքական գործընթացի վրա դրա ազդեցության տեսանկյունից ատենախոսության մեջ առանձնակի կարևորվել են Պ. Լասլետի, Ջ. Ֆիշկինի, Տ. Վան Դեյկի, Ռ. Վոդակի, Ջ. Պոկոկի, Մ. Պեշյոյի, Ռ. Բարտի, Մ. Ֆուկոյի, Կ. Յասպերսի, Յու. Հաբերմասի, Ն. Ֆեյրքլաուֆի, Ն. Բաղալոնիի, Լ. Լամսի, Գ. Քրովելսի, Հ. Շերբանի, Դ. Լյուիսի, Ս. Վիլսոնի, Ժ. Լուի, Շ. Տյանչյանի, Դ. Ջոնսոնի, Ռ. Ջոնսոնի, Լ. Ռոսկայի, Բ. Տյուրպենի, Ժ. Պեյտարի, Հ. Արենդտի, ինչպես նաև Մ. Իլյինի, Ե. Շեյգալի, Մ. Գավրիլովայի, Վ. Կուպրիանովի, Ա. Նազարովի, Օ. Կորովկովայի, Վ. Դեմյանկովի, Ա. Բուշևի, Յու. Մազիևայի, Ե. Սարաֆաննիկովայի, Վ. Մերինովի, Ա. Ալթունյանի և Է. Օրդուխանյանի աշխատությունները:

Վերը նշված հեղինակների աշխատությունների համեմատական վերլուծությունը թույլ է տվել դիտարկել քաղաքական մշակույթը, քաղաքական գործընթացը և քաղաքական խոսույթը փոխկապակցված եռամիասնության տրամաբանության մեջ:

<u>Հետազոտության նպատակը և խնդիրները:</u> Հետազոտության **նպատակը** հետխորհրդային շրջանում Հայաստանի Հանրապետությունում քաղաքական գործընթացների համալիր ուսումնասիրության և քաղաքական խոսույթի վերլուծության միջոցով քաղաքական մշակույթի էվոլյուցիայի՝ ձևավորման, առանձնահատկությունների, արդի վիճակի, փոխակերպումների և զարգացման միտումների բացահայտումն է՝ նաև նոր մեթոդի կիրառությամբ:

Հետազոտության նպատակի իրագործման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**՝

- Հետազոտել քաղաքական մշակույթի տեսական և մեթոդաբանական հիմքերը համեմատական վերլուծության միջոցով,
- Հետազոտել քաղաքական գործընթացի տեսական և մեթոդաբանական հիմքերը համեմատական վերլուծության միջոցով,
- Ուսումնասիրել քաղաքական խոսույթը որպես քաղաքական հաղորդակցության միջոց,
- Վեր հանել և վերլուծել քաղաքական խոսույթի վարչակարգային առանձնահատկությունները,

- Մշակել և կիրառել քաղաքական մշակույթի խոսութային չափման (ՔՄԽՉ) նոր մեթոդ,
- Ուսումնասիրել և բացահայտել քաղաքական մշակույթի առանձնահատկությունները հետխորհրդային ինտեգրման և ժողովրդավարացման գործընթացների վերլուծության միջոցով,
- Հետազոտել քաղաքական կայունության հիմնախնդիրը քաղաքական մշակույթի համատեքստում՝ հարավ-կովկասյան բազմական (plural) հասարակություններում դիտարկելով կոնսոցիատիվ մոտեցումը,
- Բացահայտել քաղաքական գործընթացի արդյունավետացմանը խոչընդոտող հիմնախնդիրները ՀՀ-ում,
- Հետազոտել ընտրական գործընթացի դինամիկան և վեր հանել ընտրական ինստիտուտի արդյունավետության խնդիրները ՀՀ-ում,
- Ուսումնասիրել և բացահայտել ակտիվ քաղաքական մշակույթի ձևավորման խոչընդոտները հայ հասարակությունում,
- Ուսումնասիրել և բացահայտել քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալները ՀՀ-ում,
- Գնահատել ՀՀ քաղաքական վարչակարգը քաղաքական մշակույթի խոսութային չափման (ՔՄԽՉ) նոր մեթոդով,
- Բացահայտել խորհրդարանական քաղաքական մշակույթի կայացման դժվարությունները և հեռանկարները ՀՀ-ում,
- Հետազոտել և վերլուծել հայաստանյան «թավշյա» հեղափոխությունը որպես մասնակցային քաղաքական մշակույթի դրսևորում:

<u>Հետազոտության օբյեկտը և առարկան:</u> Հետազոտության **օբյեկտը** հետխորհրդային շրջանում հայ հասարակության քաղաքական մշակույթն է: Հետազոտության **առարկան** հետխորհրդային շրջանում հայ հասարակության քաղաքական մշակույթի էվոլյուցիայի ազդեցությունն է ՀՀ քաղաքական գործընթացների վրա:

<u>Հետազոտության մեթոդաբանական հիմքերը:</u> Հետազոտության մեթոդաբանական հիմքերը պայմանավորված են առաջադրված խնդիրների բնույթով և առանձնահատկություններով: Այդ իսկ պատճառով հետազոտության մեջ լայնորեն կիրառվել են վերլուծության դիալեկտիկական, համակարգային, արժեքաբանական, համեմատական, կառուցվածքային-գործառնական, վարքաբանական, տիպաբանական մոտեցումները: Քաղաքական մշակույթը դիտվել է որպես քաղաքական համակարգի կարևորագույն բաղադրատարր, որի դեպքում քաղաքական գործընթացը համարվում է նրա առանցքային գործառույթը, որի վրա բավականին մեծ է քաղաքական խոսույթի ազդեցությունը: Հետևապես՝ քաղաքական գործընթացում քաղաքական խոսույթի չափման և գնահատման կոգնիտիվ-ճանաչողական, կոգնիտիվ քարտեզավորման, համատեքստային, նկա-

ռագրական, գաղափարաբանական, ինչպես նաև քննական մեթոդներն ունեցել են լայն գործածում:

Հետազոտության մեջ կիրառվել է քաղաքագիտական, փիլիսոփայական, մշակութաբանական, քաղաքական հոգեբանության, կոնֆլիկտաբանական և հաղորդակցական մեթոդների սինթեզ: Էմպիրիկ տվյալների ուսումնասիրության և վերլուծության համար օգտագործվել են ինդուկտիվ, դեդուկտիվ, վերացարկման և ընդհանրացման մեթոդները: Դա թույլ է տվել գիտականորեն հիմնավորված տեսական ընդհանրացումների միջոցով ձևավորվել մեթոդաբանական ապարատ՝ ուղղված քաղաքական գործընթացի վրա քաղաքական մշակույթի ազդեցության բացահայտմանը:

Քաղաքական մշակույթի և քաղաքական վարչակարգի չափման և բնորոշման նպատակով մշակվել և կիրառվել է նոր մեթոդ՝ *քաղաքական մշակույթի խոսութային չափման (ՔՄԽՉ) մեթոդը*, որտեղ հաշվի են առնվում քաղաքական գործընթացի առանձնահատկությունները՝ որպես հասարակական համակարգի բազմաշերտ և բազմավեկտոր տրանսֆորմացիայի դրսևորումներ, ինչն արտահայտվում է համապատասխան քաղաքական խոսույթում: ՔՄԽՉ մեթոդը քաղաքական մշակույթի, քաղաքական գործընթացի և քաղաքական խոսույթի՝ որպես իրար փոխլրացնող քաղաքագիտական գիտակարգերի սինթեզի հիման վրա ձևավորված չափման գործիք է, որը հնարավորություն է տալիս առավել մանրամասն և համալիր կերպով հետազոտել քաղաքական մշակույթը (մեթոդը կիրառվել է մասնավորապես՝ ՀՀ-ի դեպքում)՝ հաշվի առնելով քաղաքական գործընթացի առանձնահատկությունները:

Հետազոտության համար ընտրված, մշակված և կիրառված մեթոդների ամբողջությունը լիարժեքորեն համապատասխանում է գիտական հետազոտություններին ներկայացվող օբյեկտիվության և հավատարժանության պահանջներին:

<u>Հետազոտության էմպիրիկ հիմքը:</u> Որպես հետազոտության էմպիրիկ հիմք՝ ատենախոսության մեջ օգտագործվել են՝ ներպետական իրավական փաստաթղթեր, սոցիոլոգիական հարցումների տվյալներ, արխիվային նյութեր, վիճակագրական տվյալներ, միջազգային կազմակերպությունների չափման և գնահատման համաթվեր (ինդեքսներ), ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի զեկույցներ, ՀՀ ԱԺ և Նախագահի նախընտրական քարոզարշավներում քաղաքական ուժերի, թեկնածուների նախընտրական ծրագրեր, ՀՀ նախագահի հարցազրույցներ, ուղերձներ, ԱԺ նիստերի սղագրություններ (մասնավորապես՝ պատգամավորների ելույթներ, հարցապնդումներ, կառավարության հետ հարց ու պատասխան), քաղաքացիական նախաձեռնությունների, շարժումների, ինչպես նաև «թավշյա» հեղափոխության խոսույթը բնորոշող տեքստեր՝ որպես քաղաքական խոսույթի բովանդակային միավորների ամբողջություն:

Հետազոտության հիմնական արդյունքները և դրանց գիտական նորույթը:

- Հիմնավորվել է քաղաքական մշակույթի տեսական և մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրության գործում հայեցակարգային նոր մոտեցումների մշակման և կիրարկման անհրաժեշտությունը, որոնք հաշվի կառնեն ստույգ հասարակությունների առանձնահատկությունները, քանի որ գոյություն ունեցող մոտեցումները կարող են լինել արդյունավետ միայն որոշ դեպքերում: Այս տեսանկյունից բոլոր հասարակություններում առկա միակ համընդհանուր տարրը քաղաքական խոսույթն է, որը կարող է հիմք ծառայել քաղաքական մշակույթի առավել ամբողջական հետազոտության համար՝ որպես նոր ուղղություն:
- Բացահայտվել է քաղաքական մշակույթի, քաղաքական գործընթացի և քաղաքական խոսույթի միջև փոխկապակցվածության, փոխկախվածության բնույթը, որի դեպքում քաղաքական մշակույթը հանդես է գալիս որպես քաղաքական գործընթացի ձևավորման, փոխակերպման և զարգացման գործոն, որտեղ քաղաքական խոսույթը կատարում է հաղորդակցության և միջնորդավորման գործառույթ: Քաղաքական խոսույթը կարող է հանդես գալ ինչպես քաղաքական գործընթացի նախադրյալ, այնպես էլ՝ դրա հետևանք:
- Քաղաքական խոսույթի համեմատական վերլուծության արդյունքում վեր են հանվել դրա վարչակարգային առանձնահատկությունները՝ պայմանավորված հետխորհրդային երկրներում քաղաքական մշակույթի ոչ գծային և անցումային դրսևորումներով: ՀՀ-ի դեպքի հետազոտության արդյունքում բացահայտվել և հիմնավորվել է քաղաքական մշակույթի բնույթի և քաղաքական վարչակարգի փոխակերպման վրա քաղաքական խոսույթի ազդեցությունը:
- Առաջարկվել է քաղաքագիտական հետազոտության նոր՝ քաղաքական մշակույթի խոսութային չափման (ՔՄԽՉ) մեթոդ, որը կիրարկվել է ՀՀ-ում քաղաքական մշակույթի և քաղաքական վարչակարգի գնահատման նպատակով: 2017-2018 թվականներին անընդմեջ անցկացված հետազոտության արդյունքների համեմատությունը միջազգային հեղինակավոր ինդեքսերի արդյունքների հետ թույլ է տվել հիմնավորել տվյալ մեթոդի արդյունավետությունը և ստացված արդյունքների հավատարժանությունը՝ որպես քաղաքագիտական հետազոտության նոր մեթոդ:
- Բացահայտվել են հետխորհրդային ինտեգրման և ժողովրդավարացման գործընթացներում քաղաքական մշակույթի առանձնահատկությունները, ինչպես նաև հիմնավորվել է հարավ-կովկասյան բազմա-

կան հասարակությունների դեպքերում քաղաքական կայունության ապահովման հնարավորությունը կոնստրուկտիվ մոտեցման միջոցով:

- Ընտրական ինստիտուտի արդյունավետության և ընտրական գործընթացի դինամիկայի բացահայտման նպատակով վերլուծվել են ՀՀ-ում 1991-2018 թվականներին տեղի ունեցած բոլոր համապետական ընտրություն-քվեարկությունները (նախագահական, խորհրդարանական ընտրություններ, սահմանադրության հանրաքվեներ), որոնց արդյունքում վեր են հանվել և հիմնավորվել են դրանց ժամանակ քաղաքական ուժերի և ընտրազանգվածի մասնակցության որոշ օրինաչափություններ:
- Հիմնվելով հետխորհրդային ՀՀ-ում գործնական քաղաքականության ուսումնասիրության վրա՝ բացահայտվել են քաղաքական գործընթացի արդիականացման, ակտիվ քաղաքական մշակույթի ձևավորման դժվարությունները և առաջարկվել են դրանց հաղթահարման ուղիներ:
- Հետազոտվել և բացահայտվել են քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալները ՀՀ-ում, ինչպես նաև խորհրդարանական կառավարման մոդելի համատեքստում առանձնացվել են խորհրդարանական քաղաքական մշակույթի կայացման դժվարությունները և հեռանկարները հետխորհրդային ՀՀ-ում: Առաջարկվել են խորհրդարանական մշակույթի զարգացման և կայացման նոր մոտեցումներ:
- Վերլուծվել է 2018 թվականի հայաստանյան «թավշյա» հեղափոխությունը՝ որպես մասնակցային քաղաքական մշակույթի դրսևորում և քաղաքական արդիականացման առաջանցիկ փուլ, ինչը կարող է կայուն հիմքեր ստեղծել ՀՀ-ում քաղաքացիական մշակույթի զարգացման համար:

<u>Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:</u>

- Քաղաքական մշակույթի հայեցակարգային հիմքերի համալիր հետազոտության և համադրման արդյունքում քաղաքական մշակույթը կարելի է սահմանել որպես քաղաքական գաղափարների, գիտելիքների, ավանդույթների և արժեքների, քաղաքական մասնակցության և վարքագծի մոդելների, քաղաքական գիտակցության և սոցիալականացման փուլերի ու մակարդակների, քաղաքական հաղորդակցության միջոցների, քաղաքական ինստիտուտների փոխհարաբերակցության ամբողջություն, որը պայմանավորում է քաղաքական գործընթացները և արտահայտվում է քաղաքական խոսույթի միջոցով:
- Ցանկացած քաղաքական գործընթացի հետազոտություն պահանջում է որոշակի մոտեցման որդեգրում կամ մոտեցումների համադրում: Այս տեսանկյունից հետխորհրդային ՀՀ-ում ընդհանուր քաղաքական գործընթացի ուսումնասիրության համար առանձնապես նախընտրե-

լի է խոսութային վերլուծությունը, որը պետք է զուգորդվի նաև քաղաքական գործընթացի հետազոտության այլ մոտեցումների հետ, քանի որ քաղաքական մշակույթը դիտվում է որպես քաղաքական գործընթացը պայմանավորող գործոն, որն էական և առանցքային ազդեցություն ունի քաղաքական իրողությունների վրա: Իսկ քաղաքական մշակույթի ձևավորման և քաղաքական պրակտիկայում դրա դրսևորման առումով բավականին մեծ է քաղաքական խոսույթի ազդեցությունը:

- Քաղաքական մշակույթի խոսութային չափման (ՔՄԽՉ) մեթոդը, որտեղ հաշվի են առնվում քաղաքական գործընթացի առանձնահատկությունները, քաղաքական մշակույթի, քաղաքական գործընթացի և քաղաքական խոսույթի՝ որպես իրար փոխլրացնող քաղաքագիտական գիտակարգերի սինթեզի հիման վրա ձևավորված չափման գործիք է, որը հնարավորություն է տալիս առավել մանրամասն և համալիր կերպով հետազոտել քաղաքական մշակույթը և քաղաքական վարչակարգը:
- ՀՀ-ում քաղաքական կարգի հաստատումը, չնայած վերջին շրջանի որոշակի դրական տեղաշարժերին, մասնավորապես՝ 2018թ. «թավշյա» հեղափոխության սահմանած դրական նախադրյալներին, դեռ երկար ճանապարհ ունի անցնելու: Արդիականացման գործընթացում առկա բազմաթիվ դժվարությունները հիմնականում կապված են քաղաքական լեգիտիմության ինստիտուցիոնալացման, բազմակուսակցական համակարգի կայացման, նեպոտիստական կապերի թուլացման, ժողովրդավարության ամրապնդման, քաղաքացիական մշակույթի զարգացման, քաղաքական համակարգի արդյունավետ աշխատանքի հայեցակարգային հիմքերի մշակման և կիրարկման, ինչպես նաև այլ հարցերի հետ: ՀՀ-ում քաղաքական կարգի կայունացման և արդիականացման գործընթացի ինստիտուցիոնալացման համար անհրաժեշտ է բարձրացնել հանրության քաղաքական գիտակցությունը, որը պետք է նախաձեռնեն թե՛ քաղաքացիական, թե՛ քաղաքական շրջանակները:
- 1991-2018թթ. համապետական ընտրությունների արդյունքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում ընտրությունների ժամանակ հանրային գիտակցության մեջ շարունակում են գերակայել քաղաքական անձի գործոնը, իշխանության անձնավորված ընկալումը: Նույնիսկ լիարժեք խորհրդարանական կառավարման մոդելի անցման դեպքում այս միտումը դեռ պահպանվում է՝ խոչընդոտելով բազմակուսակցական համակարգի կայացմանը գաղափարական բազմակարծության հենքի վրա:

- Հայաստանյան քաղաքական մշակույթը ներառում է մասնակցային և ավտորիտար մշակույթի տարրեր, որտեղ վերջին տարրի ազդեցությունը մասամբ թուլացել է 2018թ. հեղափոխական գործընթացի արդյունքում: ՀՀ-ն ունի իրատեսական հնարավորություններ ժողովրդավարական մշակույթն ամրապնդելու և հետևապես՝ իր օրինակով նաև կարող է նպաստել եվրասիական բլոկի մյուս երկրներում ժողովրդավարական գործընթացների արդյունավետացմանը:
- ՔՄԽՉ մեթոդով իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում ձևավորված կիսաավտորիտար վարչակարգը, որտեղ գերակշռում էր ոչ կառուցողական, ոչ արդյունավետ բազմակողմ խոսույթը կամ բազմակողմ խոսույթի իմիտացիան, իսկ քաղաքական մշակույթում շարունակում էին տիրապետող լինել թույլ մասնակցային մշակույթի տարրերը, 2018թ.-ին գրանցել է դրական կտրուկ տեղաշարժ դեպի կիսաժողովրդավարական վարչակարգ (հիբրիդային կամ անցումային կառավարություն), իսկ քաղաքական մշակույթում սկսել են գերակայել մասնակցային քաղաքական մշակույթի տարրերը:
- ՀՀ-ում խորհրդարանականների խոսույթի որակն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում է խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական մարմնի որակի և խորհրդարանական մշակույթի մակարդակի վրա: Եվ որքան այդ խոսույթը բովանդակային, հիմնավոր, փաստարկված է, այնքան այն արդյունավետ է և կառուցողական: Կառուցողական խոսույթի ձևավորման համար անհրաժեշտ է կառուցողականության երկկողմ պատրաստակամություն թե՛ խորհրդարանական մեծամասնության, թե՛ փոքրամասնության կողմից:
- Քաղաքացիների ակտիվ մասնակցային մշակույթի պահպանումը և դրա ինստիտուցիոնալացումն ի դեմս քաղաքացիական հասարակության ինստիտուտների մշտական զարգացման, կարող են կանխարգելել վարչակարգային հետընթացի հեռանկարը ՀՀ-ում: Քաղաքացիական ակտիվ վերահսկողությունը կարող է ստեղծել ուղիղ ժողովրդավարության ազդեցության գործիքներ նոր կառավարությանը «թավշյա» հեղափոխության սահմանած իդեալներից հեռանալ թույլ չտալու համար:

<u>Հետազոտության տեսական նշանակությունը:</u> Հետազոտության մեջ առաջարկվել է հետխորհրդային ՀՀ-ում քաղաքական խոսույթի վերլուծության միջոցով քաղաքական գործընթացի վրա քաղաքական մշակույթի ազդեցության խնդրի ուսումնասիրության նոր մոտեցում, ինչը հնարավորություն է տալիս ընդլայնել տեսական քաղաքագիտության շրջանակները հասարակություն և պետություն քաղաքական, մշակութաբանական,

վարքաբանական և արժեքաբանական փոխհարաբերությունների և փոխ-գործակցության տիրույթում: Սույն աշխատանքում քաղաքական մշակույթի համատեքստում պարզորոշվել և հիմնավորվել են հետ-խորհրդային ՀՀ-ում քաղաքական և հասարակական զարգացումների տեսական հիմքերը, մասնավորապես՝ քաղաքական խոսույթի և քաղա-քական պրակտիկայի համապատասխանության խնդրի համեմատական վերլուծության առումով: Հետազոտության մեջ առաջարկվել են հայեցա-կարգային որոշակի նոր մոտեցումներ ՀՀ-ում քաղաքական գործընթացի, ինչպես նաև քաղաքական համակարգի վրա քաղաքական մշակույթի ազդեցության միտումների և մեխանիզմների ուսումնասիրության տես-անկյունից: Վերը նշված մոտեցումները դիտարկվել են հետխորհրդային ՀՀ-ում տրանսֆորմացիայի և արդիականացման ինչպես էվոլյուցիոն, այնպես էլ ռևոլյուցիոն գործընթացներին համապատասխանությամբ՝ որպես քաղաքական և հասարակական նշանակության վերափոխումներ: Հիմնավորվել և գիտական շրջանառության մեջ են դրվել հետխորհրդային քաղաքական իրողությունները բնորոշող որոշ քաղաքագիտական եզրույթներ՝ «պրիվիլոկրատ», «կրիմինոկրատ» և այլն:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը</u>: Աշխատանքի գործնական նշանակությունը պայմանավորված է այն բանով, որ հետազո-տության արդյունքում արված եզրակացությունները և առաջարկություն-ները կարող են կիրառվել քաղաքական մշակույթի, քաղաքական գործ-ընթացների և քաղաքական խոսույթի ավելի խորը իմաստավորման, ինչ-պես նաև հասարակություն և պետություն փոխհարաբերությունների և փոխգործակցության ամրապնդման նպատակով հայեցակարգային նոր մոտեցումների մշակման համար:

Հարկ է նշել, որ միևնույն ժամանակ բացահայտվել են ՀՀ-ում քաղաքականության վրա ազդեցության հիմնական գործիքները, տեխ-նոլոգիաները և ռեսուրսները, որոնց հաշվառումը կարող է ավելի արդյունավետ և դյուրին դարձնել իրական քաղաքականության ընկա-լումը՝ թույլ տալով քաղաքականության սուբյեկտներին ձեռնամուխ լինել սեփական քաղաքական նախաձեռնումներին և մշակումներին՝ միտված իրենց կողմից սահմանված քաղաքական նպատակներին:

ՔՄԽՉ մեթոդով ՀՀ-ում քաղաքական մշակույթի և քաղաքական վարչակարգի չափման և գնահատման արդյունքները կարող են ծառայել որպես էմպիրիկ և վիճակագրական տվյալներ՝ ժողովրդավարացման վարչակարգային առաջխաղացման և ամրապնդման ռազմավարություն-ների և մարտավարությունների մշակման համար: ՀՀ-ում խորհրդարա-նական մշակույթի կայացման դժվարությունների հետազոտության արդյունքում արված առաջարկությունները կարող են օգտակար լինել խորհրդարանական կառավարման մոդելի ամրապնդման և արդյունա-

վետացման գործում, մասնավորապես՝ ընտրակարգի ճշգրտման և ընդդիմության դերի բարձրացման տեսանկյունից: Աշխատանքում արված եզրակացությունները և ընդհանրացումները կարող են նպաստել ՀՀ-ում քաղաքական մշակույթի և քաղաքական գործընթացի իրական էության և բնույթի, ինչպես նաև քաղաքական կառավարման, կառավարչական կառույցների գործունեության ավելի խորը ընկալմանը՝ հնարավորություն ընձեռելով պետական իշխանության մարմիններին, քաղաքական կուսակցություններին, քաղաքական և քաղաքացիական շարժումներին ճշգրտել և բարելավել իրենց գործողությունները՝ ուղղված կառուցողական խոսույթի ձևավորմանը, քաղաքացիական համաձայնության, քաղաքացիական հասարակության ամրապնդմանը՝ որպես քաղաքացիական մշակույթի դրսևորում:

Հետազոտության ընթացքում և արդյունքում մշակվել և իրականացվում են բուհական մասնագիտական, մագիստրոսական հատուկ դասընթացներ՝ «Քաղաքական խոսույթ», «Քաղաքական մշակույթ» ԲՊՀ-ում, ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում, ինչպես նաև «Քաղաքական ընդդիմության ինստիտուտ» ԵՊՀ-ում:

<u>Հետազոտության արդյունքների փորձարկումը:</u> Ատենախոսությունը քննարկվել և երաշխավորվել է պաշտպանության ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքական հետազոտությունների բաժնի կողմից:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են **գիտական հոդվածներ** ՀՀ և արտասահմանյան գիտական հանդեսներում, պարբերականներում և ժողովածուներում: Աշխատանքի որոշ հատվածներ լույս են տեսել նաև **մենագրությունների** տեսքով, ինչպես օրինակ՝ «Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն», Երևան, 2010, «Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները ՀՀ-ում», Երևան, 2012 (համահեղինակությամբ՝ Հ. Սուքիասյան), «Հարավային Կովկասը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում», Երևան, 2018 (համահեղինակությամբ՝ Լ. Շիրինյան, Հ. Սուքիասյան), «Քաղաքական մշակույթը Հայաստանում. էվոլյուցիա և միտումներ», Երևան, 2020:

Հետազոտության հիմնական եզրակացությունները և դրույթները զեկուցվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, մասնավորապես՝ «Փիլիսոփայություն, քաղաքականություն, մշակույթ», (Մոսկվա, 2011), «Արևելյան Եվրոպայի նախաձեռնությունների կոնգրես», (Լուբլին, 2017), «Քաղաքացիական կրթությունը Արևելյան Եվրոպայում», (Վարշավա, 2017), «Ժողովրդավարության մարտահրավերները. նոր խիզախ աշխարհ», (Մարսել, 2018), «Մասնակցային մշակույթ և բյուջետավորում», (Բեռլին, 2018), «Քաղաքացիական կրթության արևելաեվրոպա-

կան ցանցի գագաթնաժողով» (Բաթում, 2019), «Բախվելով անհավասարություններին. քաղաքացիական կրթության դերը», (Գլազգո, 2019) և այլն:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 5 գլխից, 14 ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 383 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, էմպիրիկ հիմքը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Առաջին՝ «Քաղաքական մշակույթի և քաղաքական գործընթացի հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլխում, որը բաղկացած է երկու ենթագլխից, իրականացվել է քաղաքական մշակույթի ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերի համեմատական վերլուծություն: Հիմնավորվել է, որ ժամանակի ընթացքում քաղաքական մշակույթի հարացույցը հարստացել է նորանոր գիտական մշակումներով, որոնք արտացոլել են տվյալ քաղաքական ժամանակի և ուսումնասիրված հասարակությունների առանձնահատկությունները՝ հիմնվելով քաղաքական պրակտիկայի վրա: Քաղաքական մշակույթի հարացույցը մեծապես հարստացել է քաղաքական ենթամշակույթներին վերաբերող գիտական հետազոտություններով: Ժամանակի ընթացքում ընդլայնվել և համալրվել է նաև քաղաքական մշակույթի հետազոտության մեթոդաբանական ապարատը: Նորաստեղծ մեթոդները հիմնականում բխել են ստույգ հետազոտություններում առաջադրված նպատակներից, քանի որ քաղաքական մշակույթը՝ որպես քաղաքական գործընթացների կարևորագույն գործոն, ժամանակի ընթացքում ևս փոփոխվում է՝ տիրապետող դարձնելով որևէ հասարակության պարագայում քաղաքական մշակույթի որևէ մոդել:

Քաղաքական գործընթացի հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրության և համեմատական վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ քաղաքական գործընթացը դինամիկ և ոչ գծային քաղաքական երևույթ է, որը ժամանակի ընթացքում կարող է կրել

տարբեր փոփոխություններ՝ հաշվի առնելով այն հանգամանքները, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ձևով ազդեցություն գործել վերջինիս վրա: Թե՛ խնդրի հայեցակարգային հիմքերի, թե՛ տիպաբանության և թե՛ ուսումնասիրության մոտեցումների առումով քաղաքական գործընթացը՝ որպես քաղաքագիտության առանձին գիտակարգ, շարունակում է մնալ արդիական գիտահետազոտական խնդիր և կարիք ունի համալրվելու և լրամշակվելու նոր մոտեցումներով և մեթոդներով: Քաղաքական գործընթացի հետազոտության մոտեցումների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ որևէ կոնկրետ մոտեցում կարող է լինել արդյունավետ միայն համապատասխան իրավիճակում և քաղաքական ժամանակի պայմաններում: Այլ հանգամանքների առկայության դեպքում որևէ մոտեցում չի կարող լիարժեք արդյունավետությամբ կիրառվել ստույգ քաղաքական գործընթացի հետազոտության համար: Այս պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել նաև քաղաքական գործընթացի առանձնահատկությունները՝ պայմանավորված քաղաքական մշակույթի դրսևորման ձևով՝ որպես տվյալ հասարակության մեջ գերակայող մոդել:

<u>Երկրորդ՝ «Քաղաքական մշակույթի և խոսույթային հաղորդակցության մեթոդաբանական հիմնախնդիրը»</u> գլխում, որը բաղկացած է երեք ենթագլխից, հետազոտվել է քաղաքական խոսույթը որպես քաղաքական հաղորդակցության միջոց: Հիմնավորվել է, որ խոսույթի հարացույցը ձևավորվել և զարգացել է ժամանակի ընթացքում որպես հասարակական և քաղաքական գործընթացների հետազոտության նոր ուղղություն: Խոսույթի վերլուծության մեթոդաբանությունը նույնպես ժամանակի ընթացքում լրամշակվել է՝ համալրվելով խոսույթի նեղ կամ լայն ընկալումներին համապատասխան նոր գործիքակազմով:

Առանձին ենթագլխով անդրադարձ է կատարվել նաև քաղաքական խոսույթի դրսևորումներին և գործածություններին տարբեր քաղաքական վարչակարգերում, ինչի արդյունքում առաջ է քաշվել խոսույթի վարչակարգային առանձնահատկությունների դասակարգում, որի համաձայն՝

- Ամբողջատիրության խոսույթին հատուկ է մենախոսական բնույթը՝ հագեցած պաթոսով և հուզականությամբ, որտեղ խոսույթի հասցեատերը՝ ժողովուրդը, զուտ ազդվող օբյեկտ է և չի կարող իրական երկխոսության, առավել ևս՝ հակասության մեջ մտնել պաշտոնական խոսույթի հետ: Պաշտոնական խոսույթը չի հանդուրժում որևէ այլ խոսույթ, միակողմանի է և խրախուսում է ժողովրդի անմնացորդ նվիրվածությունն ու աջակցությունը գործող վարչակարգին:
- Ավտորիտար խոսույթին հատուկ են ինչպես ամբողջատիրական, այնպես էլ ժողովրդավարական խոսույթի տարրեր: Սակայն այն մեծապես կրում է կեղծ բազմակողմ կամ իմիտացիոն բնույթ, որտեղ գործածվող խոսույթն ու քաղաքական պրակտիկան տարբերվում են միմյանցից:

• Ժողովրդավարական խոսույթը հիմնականում համապատասխանում է քաղաքական պրակտիկային և հիմնվում է քաղաքական տարբեր դիրքորոշումների փոխհամաձայնեցման վրա՝ ապահովելով իրական բազմակողմ կառուցողականություն և կոնսենսուս:

Քաղաքական մշակույթի, քաղաքական վարչակարգի և քաղաքական խոսույթի փոխկապակցվածության և փոխազդեցության չափման նպատակով, մասնավորապես, հիմնվելով հետխորհրդային շրջանի քաղաքական գործընթացների գնահատման վրա, սույն գլխում առաջ է քաշվել *քաղաքական մշակույթի խոսութային չափման* (ՔՄԽՉ) մեթոդը, որը նորույթ է քաղաքագիտական հետազոտությունների իրականացման մեթոդաբանության տեսանկյունից: Այս մեթոդը, որի դեպքում հաշվի են առնվում հետխորհրդային պետություններում քաղաքական գործընթացի առանձնահատկությունները՝ որպես հասարակական համակարգի բազմաշերտ և բազմավեկտոր տրանսֆորմացիայի դրսևորումներ (ինչն արտահայտվում է համապատասխան քաղաքական խոսույթում), քաղաքական մշակույթի, քաղաքական գործընթացի և քաղաքական խոսույթի՝ որպես իրար փոխլրացնող քաղաքագիտական գիտակարգերի սինթեզի հիման վրա ձևավորված չափման գործիք է, որը հնարավորություն է տալիս առավել մանրամասն և համալիր կերպով հետազոտել քաղաքական մշակույթը (մեթոդը կիրառվել է մասնավորապես՝ ՀՀ-ի դեպքում):

<u>Երրորդ՝ «Հետխորհրդային ժողովրդավարացումը քաղաքական մշակույթի համատեքստում»</u> գլխում, որը բաղկացած է երկու ենթագլխից, միջազգային հեղինակավոր ինդեքսների վիճակագրական տվյալների կիրառությամբ համալիր համեմատական վերլուծության են ենթարկվել հետխորհրդային ինտեգրման և ժողովրդավարացման գործընթացները, ինչի արդյունքում վեր են հանվել հետխորհրդային հասարակություններում քաղաքական մշակույթի որոշ առանձնահատկություններ:

Հիմնավորվել է, որ ԽՍՀՄ փլուզումից հետո հետխորհրդային տարածքը բաժանվել է երկու տարամետ ինտեգրման բլոկների՝ եվրոպականի և եվրասիականի: Այն երկրները, որոնք նախընտրել են եվրաինտեգրումը և գտնվում են ռուսաստանյան հեռահար ազդեցության գոտում, հիմնականում կարողացել են ձևավորել ժողովրդավարական վարչակարգեր (Էստոնիա, Լատվիա, Լիտվա): Այն երկրները, որոնք նախընտրել են եվրաինտեգրումը, սակայն գտնվում են ռուսաստանյան ազդեցության մերձակա գոտում, դեռևս ունեն ինտեգրման դժվարություններ (Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա), սակայն նրանք նույնպես որոշակիորեն բարելավել են ժողովրդավարության իրենց ցուցանիշները: Միևնույն ժամանակ հետխորհրդային այն երկրները, որոնք նախընտրել են եվրասիական ինտեգրումը, ժողովրդավարացման գործընթացում բախվում են լուրջ դժվարությունների: Այդ երկրներում հիմնականում ձևավորվել են կայուն ավտորի-

տար վարչակարգեր, ինչը թույլ չի տալիս ժողովրդավարության ամրապնդում (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան): Նմանատիպ իրավիճակում են նաև այն երկրները, որոնք դեռևս չեն միացել որևէ ինտեգրման բլոկի (Ադրբեջան, Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան):

Հարավ-կովկասյան բազմական հասարակություններում քաղաքական կայունության հիմնախնդիրը դիտարկվել է քաղաքական մշակույթի համատեքստում: Այս առումով հիմնավորվել է, որ կոնսոցիատիվ մոտեցումը կարող է դառնալ տարածաշրջանի բազմական հասարակություններում ժողովրդավարացման և քաղաքական կայունության նախադրյալ, եթե/երբ ձևավորվեն սեգմենտար էլիտաներ քաղաքացիական մշակույթի զարգացման պայմաններում: Կոնսոցիատիվ խոսույթը, ինչպես նաև մշակութային ռելյատիվիզմը դիտվել են որպես հավելյալ խթան տարածաշրջանի բազմական հասարակությունների ժողովրդավարացման և քաղաքացիական մշակույթի հիմքերի ձևավորման գործում:

<u>Չորրորդ՝ «Քաղաքական գործընթացի դրսևորման առանձնահատկությունները ՀՀ-ում»</u> գլխում, որը բաղկացած է երեք ենթագլխից, հետազոտվել են քաղաքական գործընթացի արդյունավետացման հիմնախնդիրները, որոնք մեծապես կապված են քաղաքական հակամշակույթին բնորոշ տարրերի հետ: Հիմնավորվել է, որ քաղաքական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ՀՀ-ում քաղաքական կարգի կայունացման և արդիականացման գործընթացի ինստիտուցիոնալացում, ինչպես նաև անհրաժեշտ է հետևողականորեն և անընդմեջ բարձրացնել հանրության քաղաքական գիտակցության մակարդակը քաղաքական սոցիալականացման գործակալությունների աշխատանքի արդյունավետացման միջոցով, որը պետք է հավասարապես նախաձեռնեն թե՛ քաղաքացիական, թե՛ քաղաքական, մասնավորապես՝ իշխանական շրջանակները:

Հետազոտվել են նաև ՀՀ-ում ընտրական գործընթացի դինամիկան և ընտրական ինստիտուտի արդյունավետության խնդիրները: Այս առումով համեմատական վերլուծության են ենթարկվել համապետական բոլոր քվեարկությունների արդյունքները 1991-2018թթ. կտրվածքով: Համապետական ընտրությունների արդյունքների համեմատական վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ ՀՀ-ում ընտրությունների ժամանակ հանրային գիտակցության մեջ շարունակում են գերակայել քաղաքական անձի գործոնը, իշխանության անձնավորված ընկալումը: Նույնիսկ լիարժեք խորհրդարանական կառավարման մոդելի անցման դեպքում այս միտումը դեռ պահպանվում է՝ խոչընդոտելով բազմակուսակցական համակարգի կայացմանը գաղափարական բազմակարծության հենքի վրա: Թեև ընտրական գործընթացները կարևոր նշանակություն ունեն հետ-

խորհրդային երկրներում ժողովրդավարացման վիճակի գնահատման տեսակետից, այդուհանդերձ պետականության կայացման համար առանցքային է բազմակուսակցական համակարգի կայացվածությունը, որը շարունակում է խնդրահարույց մնալ ՀՀ-ի դեպքում:

Առանձին ենթագլխով քննության են առնվել նաև ակտիվ քաղաքական մշակույթի ձևավորման խոչընդոտները հայ հասարակությունում, որոնց շարքում առանձնացվել են հետևյալ հիմնական խնդիրները՝ նեպոտիզմը, «միջկուսակցական միգրացիան», հանրային շահերի ներկայացման և պաշտպանության համար պետական կառույցների՝ մասնավորապես՝ Հանրային խորհրդի անարդյունավետ աշխատանքը, ընտրակեղծարարությունը, իշխանության և բիզնեսի սերտաճումը և այլն:

<u>Հինգերորդ՝ «Քաղաքական մշակույթի ձևավորումն ու զարգացումը ՀՀ-ում»</u> գլխում, որը բաղկացած է չորս ենթագլխից, հետազոտվել և վեր են հանվել քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալները Հայաստանի առաջին Հանրապետությունում: Հիմնավորվել է, որ իր գոյության կարճ ժամանակաշրջանում, թերևս, հայկական առաջին հանրապետությունը քաղաքակրթական և մշակութային իր ներուժի շնորհիվ կարողացել է ցույց տալ իր առաջադեմ, ժողովրդավարական ձգտումը դեպի քաղաքակիրթ աշխարհ, ինչը վկայում է հայ հասարակության մեջ առկա ժողովրդավարական ավանդույթի և մասնակցային քաղաքական մշակույթի նախադրյալների մասին:

Քաղաքական մշակույթի խոսութային չափման (ՔՄԽՉ) մեթոդի կիրառությամբ գնահատվել է ՀՀ-ի քաղաքական վարչակարգը 2017, 2018 թթ. քաղաքական խոսույթի ուսումնասիրության և վերլուծության միջոցով:

2017թ.-ին ՀՀ-ում ՔՄԽՉ միջոցով քաղաքական վարչակարգի ցուցանիշը կազմել է ***2.65,*** որի համաձայն՝ հայաստանյան քաղաքական մշակույթում գերակշռել են հպատակային և թույլ (ոչ արդյունավետ) մասնակցային մշակույթին բնորոշ տարրեր, ինչը համապատասխանում է կիսաավտորիտար քաղաքական վարչակարգին, որն ավելի մոտ է կիսաժողովրդավար, քան ավտորիտար վարչակարգին: 2017թ. ներքաղաքական խոսույթը գնահատվել է որպես հիմնականում թույլ բազմակողմ խոսույթ, որում գերակշռել են ոչ կառուցողական, ոչ արդյունավետ տարրերը: Շատ հաճախ բազմակողմ քաղաքական խոսույթը կրել է իմիտացիոն բնույթ՝ հագեցած լինելով պոպուլիզմով:

2018թ. ՀՀ-ում ՔՄԽՉ միջոցով քաղաքական վարչակարգի ցուցանիշը կազմել է ***2.92,*** այսինքն՝ 2017թ.-ի համեմատ արձանագրվել է դրական աճ (0.27-ով): Դա նշանակում է, որ 2018թ. տեղի ունեցած «թավշյա» հեղափոխությունը ՀՀ-ում քաղաքական մշակույթի և քաղաքական վարչակարգի վրա ունեցել է դրական ազդեցություն:

Հետազոտվել և բացահայտվել են խորհրդարանական քաղաքական մշակույթի կայացման դժվարությունները և հեռանկարները ՀՀ-ում: Հիմնավորվել է, որ խորհրդարանականների խոսույթի որակն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում է խորհրդարանի՝ որպես ներկայացուցչական մարմնի որակի և խորհրդարանական մշակույթի մակարդակի վրա: Եվ որքան այդ խոսույթը բովանդակային, հիմնավոր, փաստարկված է, այնքան այն արդյունավետ է և պարունակում է կառուցողականության տարրեր: Խորհրդարանական մշակույթի ձևավորման գործում խոսույթն ունի առանցքային նշանակություն:

Առանձին ենթագլխով համալիր հետազոտության է ենթարկվել 2018թ. գարնանը ՀՀ-ում տեղի ունեցած «թավշյա» հեղափոխությունը, որը դիտվել է որպես մասնակցային քաղաքական մշակույթի դրսևորում: Բացահայտվել և հիմնավորվել են հեղափոխական գործընթացի հիմնական պատճառները, վերլուծվել են հեղափոխության իրականացման ընթացքը, մեթոդները և տեխնոլոգիաները, սահմանվել են հեղափոխությունից ակնկալվող որոշ արդյունքներ:

Սույն գլխում առաջ են քաշվել նաև քաղաքական համակարգի արդիականացման որոշ առաջարկներ՝ կապված խորհրդարանական մշակույթի ամրապնդման, ինչպես նաև կուսակցական համակարգի կայացման հետ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ քաղաքական գործընթացներում քաղաքական մշակույթի էվոլյուցիայի համալիր հետազոտության և վերլուծության արդյունքում հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացություններին:

1. Քաղաքական մշակույթի ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերի վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ

- Քաղաքական մշակույթի հետազոտության և գնահատման մոտեցումներն առանձին վերցված չեն կարող հավասարապես և լիարժեքորեն կիրառվել և բացահայտել քաղաքական մշակույթի ամբողջական պատկերը բոլոր հասարակություններում: Տարբեր մոտեցումներ կարող են կիրառվել և լինել արդյունավետ միայն որոշ երկրներում՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները: Այն գործոնները, որոնք կարող են վճռորոշ դեր ունենալ որևէ հասարակության քաղաքական մշակույթի ուսումնասիրության և գնահատման գործում, մեկ ուրիշում կարող են, ըստ էության, ամբողջությամբ կամ մասամբ բացակայել կամ էլ լինել բավականին թույլ, ինչպես օրինակ՝ սոցիալական, տնտեսական, էթնիկական, ռասակայան,

կրոնական, քաղաքակրթական, մշակութային, վարչակարգային և այլ գործոնները:

- Ի տարբերություն վերը նշված գործոնների՝ այն գործոնը, տարրը, որն առանց բացառության առկա է բոլոր հասարակություններում և հետևապես՝ նրանց քաղաքական մշակույթում, *քաղաքական խոսույթն է*: Ուստի քաղաքական խոսույթը կարող է լինել քաղաքական մշակույթի ուսումնասիրության և գնահատման արդյունավետ և համընդհանուր միջոց: Խոսույթի քննական վերլուծությունն այս դեպքում կարող է ծառայել որպես քաղաքական մշակույթի հետազոտության մեթոդաբանական հիմք:
- Համեմատական վերլուծության ենթարկելով քաղաքական մշակույթի վերաբերյալ տեսական մոտեցումները և ընդհանրացնելով քաղաքական մշակույթի հետազոտության մեթոդաբանության վերաբերյալ համեմատական վերլուծության միջոցով ստացված արդյունքները՝ կարելի է *քաղաքական մշակույթը սահմանել որպես քաղաքական գաղափարների, գիտելիքների, ավանդույթների և արժեքների, քաղաքական մասնակցության և վարքագծի մոդելների, քաղաքական գիտակցության և սոցիալականացման փուլերի ու մակարդակների, քաղաքական հաղորդակցության միջոցների, քաղաքական ինստիտուտների փոխհարաբերակցության ամբողջություն, որը պայմանավորում է քաղաքական գործընթացները և արտահայտվում քաղաքական խոսույթի միջոցով:*

2. Քաղաքական գործընթացի հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերի ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հարկ է պնդել, որ

- Եթե քաղաքական գործընթացի հետազոտության համար մի քաղաքական համակարգում որևէ (օրինակ՝ ինստիտուցիոնալ) մոտեցումը կարող է լինել արդյունավետ, ապա այլ համակարգերում, որտեղ քաղաքական ինստիտուտները կայացած չեն, գերակայում են հասարակական-քաղաքական կազմակերպման այլ մոդելներ, այդ նույն մոտեցումը չի կարող ունենալ միևնույն արդյունավետությունը: Այս պարագայում անհրաժեշտ է քաղաքական գործընթացի ուսումնասիրության համար ընտրել այլ մոտեցում կամ համադրել որոշ մոտեցումների համապատասխան տարրերը: Հետևապես՝ որքան էլ քաղաքական գործընթացներն իրենց ընդհանուր հատկանիշներով լինեն համեմատելի և ունենան որոշ ընդհանրություններ, միևնույն է, այդ գործընթացները նաև տարբերվելու են միմյանցից իրենց առանձնահատկություններով: Այս տեսանկյունից հետխորհրդային ժամանակաշրջանում ՀՀ-ում տեղի ունեցող քաղաքական գործընթացների ուսումնասիրության համար որպես արդյունավետ մոտեցում նախընտրելի է *խոսույթային վերլուծությունը*, որը զուգորդվում է նաև քաղաքական գործընթացի հետազոտության այլ մոտեցումների հետ, քանի որ քաղաքական մշակույթը դիտարկվում է որպես քաղաքական գործընթ-

թացը պայմանավորող գործոն, որն էական և առանցքային ազդեցություն ունի քաղաքական իրողությունների վրա: Իսկ քաղաքական մշակույթի ձևավորման և քաղաքական պրակտիկայում դրա դրսևորման առումով բավականին մեծ է քաղաքական խոսույթի ազդեցությունը:

3. Քաղաքական խոսույթի՝ որպես քաղաքական հաղորդակցության միջոցի ուսումնասիրությունը թույլ տվեց վեր հանել, որ

- Արդի շրջանում հայաստանյան գործնական քաղաքականության մեջ գրեթե բացակայում է հայեցակարգային գաղափարական պլյուրալիզմը, քանի որ քաղաքական դաշտում ակտիվ գործող կուսակցությունների ծրագրերը հիմնականում չեն տարբերվում միմյանցից: Այս պարագայում քաղաքական ուժերը շեշտը դնում են բացառապես առաջնորդի անձնական որակների վրա: Այն հանգամանքը, որ հասարակությունը դեռևս գտնվում է քաղաքական սոցիալականացման անձնավորման փուլում, հնարավորություն է տալիս քաղաքական ուժերին ներկայանալ առաջնորդ-անձի կերպարով: Այդ պատճառով է, որ քաղաքական ուժի հաջողությունը քաղաքական դաշտում գլխավորապես պայմանավորված է իր առաջնորդով: Այսպիսի կուսակցություններում լիդերային դետերմինիզմի բացասական և վտանգավոր կողմն է նաև այն, որ առաջնորդի անձնական վարքագծով է պայմանավորված քաղաքական ուժի գործունեությունը:
- Քաղաքական բանավեճի մշակույթի զարգացումը հայաստանյան քաղաքական գործընթացներում շարունակում է մնալ խիստ կարևոր խնդիր: Այս դեպքում կրկին առաջնային է դառնում քաղաքական խոսույթի արդյունավետացմանն ուղղված մեխանիզմների մշակումը քաղաքական գործընթացների հետ վերջինիս համահունչ ընթացքի ապահովման նպատակադրումով: Քաղաքական բանավեճի մշակույթի թերզարգացվածության հիմնական պատճառը լիդերային դետերմինիզմն է հայաստանյան քաղաքական կյանքում: Իրական քաղաքական բանավեճ կարող է առաջանալ միայն գաղափարական պլյուրալիզմի հիմքով բազմակուսակցական համակարգի կայացման դեպքում:

4. Քաղաքական խոսույթի վարչակարգային առանձնահատկությունների, քաղաքական մշակույթի և վարչակարգերի գնահատման մոտեցումների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է, որ

- Քաղաքական վարչակարգերի խոսութային առանձնահատկությունների վերհանման, վարչակարգերի չափման և գնահատման համար կիրառվող մոտեցումները վկայում են, որ տարբեր երկրներում անգամ նույն վարչակարգի գնահատման համար պահանջվում են տարբեր մոտեցումներ: Ակնհայտ է, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների համար նման մոտեցումը ևս անհրաժեշտ է, քանի որ այդ երկրներն անցել են եզակի ուղի՝ կոմունիստական վարչակարգից այլ վարչակարգի: Չնայած

գոյություն ունեցող մի շարք մոտեցումների ու սկզբունքների, որոնք կիրառելի են հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում քաղաքական խոսույթի միջոցով վարչակարգերի ուսումնասիրության համար՝ այնուամենայնիվ, այդ երկրների դեպքերի ուսումնասիրությունը ևս պահանջում է հատուկ մոտեցումներ:

5. Հետխորհրդային երկրների ինտեգրման և ժողովրդավարացման գործընթացներում քաղաքական մշակույթի ուսումնասիրությունը վեր հանեց, որ

- ԽՍՀՄ փլուզումից հետո այն երկրները, որոնք նախընտրել են եվրաինտեգրումը և գտնվում են ռուսաստանյան հեռահար ազդեցության գոտում, հիմնականում կարողացել են ձևավորել ժողովրդավարական վարչակարգեր (Էստոնիա, Լատվիա, Լիտվա): Այն երկրները, որոնք նախընտրել են եվրաինտեգրումը, սակայն գտնվում են ռուսաստանյան ազդեցության մերձակա գոտում, դեռևս ունեն ինտեգրման դժվարություններ (Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա), սակայն նրանք նույնպես որոշակիորեն բարելավել են ժողովրդավարության իրենց ցուցանիշները: Դա նշանակում է, որ եվրաինտեգրումն ամեն դեպքում նպաստում է ժողովրդավարական արժեքների առաջխաղացմանը հետխորհրդային տարածքում: Այդ իրավիճակի վրա ազդել է նաև որոշ հետկոմունիստական երկրների պատմական փորձը և եվրաինտեգրման գործում նրանց մասնակցային քաղաքական մշակույթի ներուժը (Լատվիա, Լիտվա, Էստոնիա):
- Հետխորհրդային այն երկրները, որոնք նախընտրել են եվրասիական ինտեգրումը, ժողովրդավարացման գործընթացում բախվում են լուրջ դժվարությունների: Այդ երկրներում հիմնականում ձևավորվել են կայուն ավտորիտար վարչակարգեր, ինչը թույլ չի տալիս ժողովրդավարության ամրապնդում (Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան): Նմանատիպ իրավիճակում են նաև այն երկրները, որոնք դեռևս չեն միացել որևէ ինտեգրման բլոկի (Ադրբեջան, Տաջիկստան, Թուրքմենստան և Ուզբեկստան): Այդ երկրներում հաստատված ավտորիտար վարչակարգերը նույնպես պայմանավորված են դրանցում տիրապետող քաղաքական մշակույթի հպատակային և/կամ նահապետական տեսակների գերակայությամբ: Այդ երկրներում հասարակության քաղաքական մշակույթը հիմնականում ունի կախյալ բնույթ:
- Ոչ եվրոպական բլոկի երկրներում իր ժողովրդավարական ներուժով առանձնանում է ՀՀ-ն, որի փորձը կարող է դրականորեն ներգործել եվրասիական բլոկի հետագա ժողովրդավարացման վրա: Հայաստանյան քաղաքական մշակույթը ներառում է մասնակցային և ավտորիտար մշակույթի տարրեր, որտեղ վերջին տարրի ազդեցությունը մասամբ թուլացել է 2018թ. հեղափոխական գործընթացի արդյունքում: ՀՀ-ն ունի իրատեսական հնարավորություններ ժողովրդավարական մշակույթն ամրապնդելու

համար և հետևապես՝ կարող է իր օրինակով նպաստել եվրասիական բլոկի մյուս երկրներում ժողովրդավարական գործընթացների արդյունավետացմանը:

6. Հարավ-կովկասյան բազմական հասարակություններում քաղաքական կայունության և քաղաքական մշակույթի փոխհարաբերակցության խնդրի համեմատական վերլուծությամբ հիմնավորվել է, որ

- քաղաքացիական մշակույթի առավելությունը ժողովրդավարական ինքնակարգավորվող համակարգ ստեղծելու կարողությունն է: Ժողովրդավարացման հիմքում ընկած է հասարակությունների մշակութային ներուժը, ինչը հիմք է հանդիսանում տվյալ գործընթացի արդյունավետության համար: Այս առումով Ադրբեջանը և Վրաստանը, լինելով բազմական հասարակական կառուցվածք ունեցող պետություններ, քաղաքացիական մշակույթի ձևավորման և ժողովրդավարացման գործում ունեն զգալի դժվարություններ: Հաշվի առնելով նաև տեղական առանձնահատկությունները՝ կոնսոցիատիվ խոսույթի գործադրումն այս պետություններում կարող է կարևոր գործոն դառնալ ժողովրդավարացման հաջող ընթացք ապահովելու համար: Այսպիսի խոսույթը կարող է նաև նպաստել հասարակության տարբեր սեգմենտների միջև առկա սոցիալական կոնֆլիկտների հաղթահարմանը, որի դեպքում քաղաքացիական մշակույթի ձևավորման հեռանկարը կդառնա ավելի իրատեսական՝ դրանով իսկ մյուս էթնիկ սեգմենտների համար ստեղծելով ինքնության անվտանգության հավելյալ երաշխիքներ:
- Հարավ-կովկասյան բազմական հասարակական կառուցվածք ունեցող երկրներում՝ Ադրբեջանում և Վրաստանում, տեսականորեն առկա են ժողովրդավարության կոնսոցիատիվ մոդելի գործադրման համար անհրաժեշտ ձևական բոլոր տարրերը: Ե՛վ վրացական, և՛ ադրբեջանական հասարակություններում առկա են էթնիկ, կրոնական, լեզվական, մշակութային և այլ սեգմենտային տարբերություններ, ինչպես նաև նկատվում են էթնոկենտրոնության տարրեր, որոնք արտոնյալ պայմաններ են ստեղծում գերակա էթնիկ խմբերի կողմից մյուսների նկատմամբ ազդեցություն ապահովելու հարցում: Այդ երկրներում կարելի է նկատել կոնսոցիատիվ մոդելի արդյունավետ կիրառության որոշ նպաստավոր գործոններ ևս, ինչպիսիք են՝ բնակչության ոչ մեծ թիվը և սեգմենտների աշխարհագրական կենտրոնացվածությունը: Այս գործոնները, սակայն, կոնսոցիատիվ խոսույթի հետզհետե գործածման և ամրապնդման պայմաններում է, որ կարող են նպաստել քաղաքացիական մշակույթի ձևավորմանը, քանի որ դրանք հավելյալ ներուժ են ստեղծում, որպեսզի սեգմենտները ձգտեն համընդհանուր նպատակի: Այս պարագայում որպես համընդհանուր նպատակ կարող է ծառայել հավաքական անվտանգությունը, հակառակ դեպքում գերակա էթնոսները մշտապես ձգտելու են գերիշխանու-

թյան՝ պարտադրելով իրենց տիրապետող քաղաքական մշակույթը: Իսկ ենթակա էթնոսները՝ որպես ենթամշակույթներ, իրենց հերթին փորձելու են ամեն կերպ հակազդել, դիմակայել, զսպել գերակա էթնոսի կողմից իրենց ուղղված տարատեսակ սպառնալիքները, ինչը մշտապես ստեղծելու է կոնֆլիկտածին իրավիճակներ:

7. ՀՀ-ում քաղաքական գործընթացի արդյունավետացման հիմնախնդիրների հետազոտությունը թույլ է տալիս պնդել, որ

- ՀՀ-ում քաղաքական կարգի հաստատումը, չնայած վերջին շրջանի որոշակի դրական տեղաշարժերին, մասնավորապես՝ 2018թ. «թավշյա» հեղափոխության սահմանած դրական նախադրյալներին, դեռ երկար ճանապարհ ունի անցնելու, քանի որ արդիականացման շրջանում առկա են բազմաթիվ դժվարություններ, որոնք պետք է հաղթահարել: Դրանք հիմնականում կապված են *քաղաքական լեգիտիմության ինստիտուցիոնալացման, բազմակուսակցական համակարգի կայացման, իշխանական օղակներում նեպոտիստական կապերի թուլացման, ժողովրդավարացման հետընթաց թույլ չտալու, քաղաքական համակարգի արդյունավետ աշխատանքի հայեցակարգային հիմքերի մշակման և կիրարկման,* ինչպես նաև այլ կարևոր խնդիրների հետ: Այսինքն՝ քաղաքացիների ավելացող պահանջներին իշխանությունները պետք է կարողանան տալ համարժեք պատասխան, որ դա չհանգեցնի սոցիալական լարվածության խորացման, իսկ առանց հասարակական կայունության ապահովման, կառավարության կողմից նախաձեռնվող բարեփոխումները չեն կարող միանշանակ ընդունվել քաղաքացիների կողմից:

8. ՀՀ-ում ընտրական գործընթացի դինամիկայի, ընտրական ինստիտուտի արդյունավետության խնդիրների վերլուծության արդյունքների համեմատությունը հետխորհրդային երկրների ընտրությունների վիճակագրական ցուցանիշների վերլուծության ժամանակ բացահայտված օրինաչափությունների հետ ցույց է տալիս, որ

- Հետխորհրդային երկրներում նախագահական և խորհրդարանական ընտրությունները միմյանցից տարբերվում են թե՛ մրցակցայնությամբ, թե՛ նախընտրական և հետընտրական զարգացումների ժամանակ դրսևորված քաղաքական խոսույթով, թե՛ այդ զարգացումների լարվածությամբ:
- Հետխորհրդային տարածքում նախագահական ընտրությունների ժամանակ նկատվում է ավելի բարձր մասնակցություն, հետևաբար և ավելի է կարևորվում այդ ընտրությունների արդյունքը հասարակական զարգացումների տեսակետից: Ընդ որում, այդ օրինաչափությունը ՀՀ-ում նկատվել է ոչ միայն նախկինում նախագահական ինստիտուտի զգալիորեն գերակշռող լիազորությունների, ավելի ուշ խորհրդարանի ու նախագահի լիազորությունների սահմանադրական լիարժեք հավասարակշռվածության,

այլև նույնիսկ 2015թ. ի վեր լիարժեք խորհրդարանական կառավարման մոդելի անցման դեպքում:

- Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ընտրական ինստիտուտի գործունեության արդյունավետության ուսումնասիրությունը թերի է միայն ընտրական գործընթացների վիճակագրական տվյալների օգտագործմամբ: Այն կարող է բացահայտել իրական հիմնախնդիրները, երբ վերլուծության ժամանակ հաշվի են առնվում նաև կուսակցությունների վարքային դրսևորումները և բազմակուսակցական համակարգի գործունեությունը բնութագրող տվյալները:
- 1991-2018թթ. համապետական ընտրությունների արդյունքների համեմատական վերլուծությունը վեր է հանել, որ ՀՀ-ում ընտրությունների ժամանակ հանրային գիտակցության մեջ շարունակում են գերակայել քաղաքական անձի գործոնը, իշխանության անձնավորված ընկալումը: Նույնիսկ լիարժեք խորհրդարանական կառավարման մոդելի անցման դեպքում այս միտումը դեռ պահպանվում է՝ խոչընդոտելով բազմակուսակցական համակարգի կայացմանը գաղափարական բազմակարծության հենքի վրա:
- Այս ամենով հանդերձ՝ 2018թ. գարնանը ՀՀ-ում տեղի ունեցած քաղաքական գործընթացները կարող են նպաստավոր նախադրյալներ ստեղծել ընտրական գործընթացի և ընտրական ինստիտուտի արդյունավետացման համար՝ հաշվի առնելով ընտրական մշակույթի զարգացումը և ընտրությունների նկատմամբ հասարակության շրջանում վստահության ավելացումը, ընտրակեղծարարության զգալի նվազումը և 7-րդ գումարման ԱԺ ընտրությունների արդյունքների բարձր հավատարժանությունը:

9. Ուսումնասիրելով ՀՀ-ում ակտիվ քաղաքական մշակույթի ձևավորման գործընթացը՝ առանձնացվել են որոշ խնդիրներ (օրինակ՝ իշխանության և բիզնեսի սերտաճում, «միջկուսակցական միգրացիա», ընտրակեղծարարություն, նեպոտիզմ և այլն), որոնց հաղթահարման համար նախ և առաջ անհրաժեշտ է՝

- կրթության միջոցով մասնակցային քաղաքական մշակույթի խթանում, որը կձևավորի ակտիվ քաղաքացի, ով պատասխանատվություն կկրի ինքն իր առջև և պատրաստակամ կլինի մասնակցել քաղաքացիական-ժողովրդավարական ակտիվ նախաձեռնություններին քաղաքական որոշումների կայացման վրա ազդեցություն գործելու նպատակով: Այս պարագայում ևս քաղաքացիական ակտիվ մասնակցության կարևորագույն խթանը համապատասխան քաղաքական խոսույթն է, որի գործնական արդյունավետությունը նկատվեց «թավշյա» հեղափոխության ժամանակ:

10. ՀՀ-ում քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալների հետազոտության արդյունքում հիմնավորվել է, որ

• Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում ժողովրդավարական պետության կերտման բազմաթիվ փորձեր են ձեռնարկվել, ինչը տվյալ ժամանակաշրջանում միջազգային մակարդակով կարելի է դիտել որպես բավական առաջադեմ նպատակ: Սակայն բազմաթիվ ներքին մարտահրավերներ և արտաքին անվտանգային սպառնալիքներ արգելակել և կասեցրել են առաջին հանրապետության ընթացքը՝ դառնալով նրա անկման հիմնապատճառ: Իր գոյության կարճատև ժամանակաշրջանում քաղաքակրթական և մշակութային իր ներուժի շնորհիվ առաջին հանրապետությունը կարողացել է ցույց տալ իր առաջադեմ, ժողովրդավարական ձգտումը դեպի քաղաքակիրթ աշխարհ, ինչը վկայում է հայ հասարակության մեջ առկա ժողովրդավարական ավանդույթի և մասնակցային քաղաքական մշակույթի նախադրյալների մասին: Այս քաղաքական փորձը և ներուժը հետևողական, նպատակային և պետական համապատասխան քաղաքական շահի և կամքի ներդաշնակեցման և դրսևորման դեպքում կարող են ունենալ իրենց արդյունավետությունը նույնիսկ այսօր: 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին ՀՀ-ում տեղի ունեցած «թավշյա» հեղափոխությունը՝ որպես մասնակցային քաղաքական մշակույթի դրսևորում, իրական հնարավորություն ստեղծեց բացահայտելու հայ հասարակության ժողովրդավարական ներուժը:

11. Քաղաքական մշակույթի խոսութային չափման միջոցով ՀՀ-ում քաղաքական վարչակարգի գնահատումը 2017 և 2018թթ. ցույց է տվել, որ

• եթե 2017թ.-ին ՀՀ-ում ՔՄԽՉ միջոցով քաղաքական վարչակարգի ցուցանիշը կազմել է ***2.65,*** ապա 2018թ. այն կազմել է ***2.92***, այսինքն՝ 2017թ.-ի համեմատ արձանագրվել է դրական աճ (0.27-ով): Դա նշանակում է, որ 2018թ. տեղի ունեցած «թավշյա» հեղափոխությունը ՀՀ-ում քաղաքական մշակույթի և քաղաքական վարչակարգի տեսանկյունից ունեցել է դրական ազդեցություն:

• 2018թ. ցուցանիշը զգալի առաջընթաց է մեկ տարվա կտրվածքով, ինչը բացատրվում է քաղաքական մշակույթում *մասնակցային մշակույթին բնորոշ տարրերի գերակայությամբ*՝ պայմանավորված հեղափոխական քաղաքական գործընթացով: 2.92 միավորի դեպքում ՀՀ-ն զգալի առաջընթաց է արձանագրել նաև քաղաքական վարչակարգի առումով՝ այն էլ ավելի մոտենալով կիսաավտորիտարից *կիսաժողովրդավարական (անցումային կառավարության կամ հիբրիդային)* վարչակարգին: Արդեն երկրորդ տարին անընդմեջ ՔՄԽՉ մեթոդով իրականացվող չափումների արդյունքների համեմատությունը հեղինակավոր միջազգային ինդեքսների հետ ապացուցել է տվյալ մեթոդի արդյունավետությունը և ստացված արդյունքների հավատարժանությունը:

• ՔՄԽՉ մեթոդով իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում տարիներ շարունակ ձևավորված կիսաավտորիտար

վարչակարգը, որտեղ գերակշռում էր ոչ կառուցողական, ոչ արդյունավետ բազմակողմ խոսույթը կամ բազմակողմ խոսույթի իմիտացիան, իսկ քաղաքական մշակույթում շարունակում էին տիրապետող լինել թույլ մասնակցային մշակույթի տարրերը, 2018թ.-ին գրանցել է դրական կտրուկ տեղաշարժ դեպի կիսաժողովրդավարական վարչակարգ, իսկ քաղաքական մշակույթում սկսել են գերակայել մասնակցային քաղաքական մշակույթի տարրերը, ինչը շարունակականության դեպքում կարող է կարևոր հիմքեր ստեղծել քաղաքացիական մշակույթի ձևավորման և կայացման համար:

12. ՀՀ-ում խորհրդարանական քաղաքական մշակույթի կայացման դժվարությունների և հեռանկարների ուսումնասիրությունը թույլ է տալիս առաջ քաշել առկա դժվարությունների հաղթահարման և խորհրդարանական մշակույթի զարգացման համար անհրաժեշտ հետևյալ քայլերը՝

- Գաղափարականացնել քաղաքական կուսակցությունները ոչ միայն տեսական, այլև գործնական դաշտում՝ նվազագույնի հասցնելով դրանց՝ իրենց առաջնորդների հետ նույնականացվելու միտումները:
- Բարձրացնել ընդդիմության դերակատարությունը խորհրդարանում: Տարբերակել ընդդիմությունը՝ ըստ գործառույթի և ըստ սուբյեկտության, որտեղ խորհրդարանի, հետևապես՝ նաև խորհրդարանական մշակույթի արդյունավետությունը կախված է ըստ գործառույթի՝ ընդդիմության դերակատարության բարձրացումից, երբ ընդդիմադիր դաշտում գործող խորհրդարանական խմբակցություն(ներ)ը հակադրվում են խորհրդարանական մեծամասնությանը և/կամ կառավարությանը, այլ ոչ թե ներկայանալով ընդդիմություն՝ ավելի հաճախ գործում են դրանց օգտին: Ըստ գործառույթի ընդդիմությունը վերաբերում է նաև մեծամասնական ուժի այն ներկայացուցիչներին, որոնք կարող են միանալ խորհրդարանական փոքրամասնությանը և քվեարկել կառավարության ներկայացրած օրենսդրական նախաձեռնությունների դեմ, այլ ոչ թե մշտապես լինեն նրա կողմից ներկայացված օրինագծերի «դակողները»:
- Խորհրդարանական մշակույթի արդյունավետությունը կախված է նաև ընտրակարգի ձևից: Համամասնականությունն ավելի լայն ներկայացվածության հնարավորություններ է ընձեռում ընդդիմությանը, քան մեծամասնական ընտրակարգը: Համամասնականությունը նաև խթանում է կուսակցական համակարգի կայացումը և բարձրացնում է կուսակցությունների կշիռը, ինչը խորհրդարանական մշակույթի զարգացման տեսանկյունից շատ կարևոր է: Համամասնականություն ասելիս պետք է դրանից դուրս դիտել ՀՀ ընտրական օրենսդրությամբ սահմանված «վարկանիշային ընտրակարգը», որը, ըստ էության, մեծամասնական ընտրակարգի տրամաբանություն է բովանդակում, երբ կրկին ընտրությունը փաստացիորեն կատարվում է որևէ անձ-թեկնածուի օգտին տրվող քվեի միջոցով: «Վարկա-

նիշային ընտրակարգն» ուղիղ խոչընդոտ է խորհրդարանական մշակույթի կայացման համար, և ընտրական օրենսգրքի փոփոխությամբ դրա վերացումը խիստ անհրաժեշտ է:

- Համամասնականությունը կայուն մեծամասնության և փոքրամասնական կառավարության դեպքում: Կայուն մեծամասնության դեպքում մեկ ուժ է ձևավորում կառավարություն: Սակայն փոքրամասնական կառավարությունը, ըստ ընտրության արդյունքների, ձևավորվում է այն դեպքում, երբ որևէ ուժ չի ստացել կայուն մեծամասնություն, և դրա արդյունքում առավել ձայներ ստացած ուժը որևէ ընդդիմադիր ուժի հետ համագործակցությամբ ձևավորում է փոքրամասնական կառավարություն: Սա հնարավորություն է տալիս խորհրդարանական ընդդիմությանը արդյունավետորեն վերահսկել փոքրամասնական կառավարությանը՝ տալով նրան հանձնարարականներ:
- Խորհրդարանական ընդդիմության գործունեության իրավական պաշտպանություն, որը ենթադրում է ընդդիմադիր խմբակցության(ների) կողմից առաջարկվող օրինագծերի՝ խորհրդարանական նիստերի օրակարգում ընդգրկում ամբողջ խորհրդարանի կազմով քննարկման նպատակով, ինչը բխում է համամասնականության և ներկայացուցչականության սկզբունքից՝ հնարավորություն ընձեռելով խորհրդարանական փոքրամասնության օրենսդրական առաջարկներն ավելի լսելի դարձնելու համար:

13. Հետազոտելով հայաստանյան «թավշյա» հեղափոխությունը որպես մասնակցային քաղաքական մշակույթի դրսևորում՝ հարկ է պնդել, որ

- «Թավշյա» հեղափոխությունը՝ որպես հեղափոխական արդիականացման գործընթաց, ունենալով ժողովրդական լայնամասշտաբ աջակցություն և քաղաքացիական մասնակցություն, խթանեց հայ հասարակության մեջ մասնակցային քաղաքական մշակույթը՝ այն բարձրացնելով ավելի կայուն հիմքերի վրա: Այս հեղափոխական գործընթացը ստեղծել է կարևոր նախադրյալներ ՀՀ-ի ժողովրդավարական արդիականացման համար, որտեղ քաղաքացիական մասնակցությունը դարձել է առանցքային գործոն: «Թավշյա» հեղափոխությունն արդիականացման առաջանցիկ փուլ է: Չնայած այն բանին, որ մասնակցային մշակույթի առկայությունը դեռևս չի նշանակում քաղաքացիական մշակույթի ձևավորում, այդուհանդերձ, այն հանդիսանում է վերջինիս ձևավորման համար կարևորագույն և կայուն նախապայման, որտեղ քաղաքական ինստիտուցիոնալացումը դառնում է խիստ անհրաժեշտ:
- Քաղաքացիների ակտիվ մասնակցային մշակույթի պահպանումը և դրա ինստիտուցիոնալացումն ի դեմս քաղաքացիական հասարակության ինստիտուտների մշտական զարգացման, կարող են կանխարգելել վարչակարգային հետընթացի հեռանկարը ՀՀ-ում: Քաղաքացիական ակտիվ

վերահսկողությունը կարող է ստեղծել ուղիղ ժողովրդավարության ազդեցության գործիքներ նոր կառավարությանը «թավշյա» հեղափոխության սահմանած իդեալներից հեռանալ թույլ չտալու համար: «Թավշյա» հեղափոխության միջոցով և արդյունքում հանրային խոսույթի աճող սենտիմենտալացումը կարող է հանգեցնել բացասական գործնական հետևանքների: Հետևապես՝ հանրային խոսույթում առկա այս միտումը հետզհետե պետք է նվազեցվի:

- Հեղափոխական արդիականացման հաջող և արդյունավետ ընթացքի ապահովման նպատակով իշխանության ներսում տեղի ունեցող վերադասավորումներին զուգահեռ անհրաժեշտ է ձեռնամուխ լինել ՀՀ-ում կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացմանը և կայացմանը, քանի որ չի կարող որևէ քաղաքական վարչակարգ իրապես դառնալ ժողովրդավարական առանց կուսակցական համակարգի կայացման: Նույնիսկ առանց կեղծիքների ընտրությունները միայն կարող են ապահովել ոչ երկարաժամկետ քաղաքական կայունություն, ինչի անհրաժեշտությունը, առավելապես արտաքին սպառնալիքների և տարածաշրջանային մարտահրավերների պարագայում կենսական է: Մի շարք պատճառների հետ մեկտեղ նաև կուսակցական համակարգի չկայացվածությունն էր, որ ՀՀ-ում հանգեցրեց հեղափոխական իրավիճակի: Եվ այսօր էլ քաղաքական իրականության մեջ պահպանվում է տարածված այն երևույթը, ինչը որպես քաղաքական հակամշակույթ, կոչվում է «քաղաքական ճամբարափոխություն»: Դրա պատճառը կուսակցությունների գաղափարական հենքի թերագնահատումն է կուսակցականների կողմից: Որևէ կուսակցության անդամակցելու և դրանից դուրս գալու հարցում մեծապես կարևորվում են ոչ թե գաղափարախոսությունը, սկզբունքները, այլ ուղղակի քաղաքական դաշտում տվյալ ուժի գրաված շահեկան դիրքը: Նշված երևույթն առաջին խոչընդոտն է կուսակցական համակարգի կայացման գործում: Այս պարագայում հեղափոխական արդիականացումը պարտավոր է հաշվի առնել նաև խորհրդարանական համակարգի անցման պայմաններում կուսակցական համակարգի մոդելի ընտրության խնդիրը:
- Երկբլոկ կամ երկու+մեկ կուսակցական համակարգը կարող է ՀՀ-ի համար լինել արդյունավետ՝ նկատի ունենալով զարգացած խորհրդարանական մշակույթ ունեցող պետությունների փորձը: Միևնույն ժամանակ, սակայն, տեղական առանձնահատկությունների հաշվառումը պետք է լինի օրակարգային: Երկբլոկ կամ երկու+մեկ կուսակցական համակարգի ձևավորումը նաև թույլ կտա «ռեալ պոլիտիկի» դաշտից դուրս մղել «պիգմեյներին», որոնց աշխատանքի արդյունավետությունը անցյալ 20 տարիների ընթացքում շոշափելի չէր: Իսկ «պիգմեյի» կամ «արբանյակի» գործառույթ իրականացնող քաղաքական ուժերը մշտապես հակված են միանալ քաղաքական մեծամասնությանը (նույնիսկ առանց հաշվի առնելու

գաղափարախոսական հակասությունները) և հարմար պահին նրան լքել՝ խուսափելով քաղաքական պատասխանատվությունից:

- Հետհեղափոխական վիճակում ՀՀ-ն բախվում է որոշակի ներքին խոչընդոտների, որտեղ առանցքային դերակատարություն ունի այսպես կոչված՝ «խորքային պետությունը»: Թաքույց փոխշահավետ կապերից բաղկացած այդ վիճակում, երբ պետական կառավարման համակարգի միջին օղակներում, որոնք դեռ կադրերի առումով լիարժեք չեն փոփոխվել, սովորույթի և գործնական ավանդույթի մակարդակում շարունակում են տիրապետող մնալ համապատասխան հարաբերությունները, որոնք ամեն կերպ դիմադրում են հեղափոխական արդիականացմանը՝ ջանալով պահպանել այն նախկին վիճակը, որին իրենք լավագույնս հարմարվել են: Այս դեպքում «խորքային պետությունը» ձգտում է դե ֆակտո իր ձեռքը վերցնել իշխանությունը՝ վերադասների կողմից իրենց շահերին հակասող որոշումների վրա ազդեցություն գործելու նպատակով ձևավորելով ոչ ակնհայտ ազդեցության խմբեր: Այս երևույթի դեմ պայքարը, ըստ էության, ավելի բարդ է, քան հեղափոխական գործընթացի միջոցով իշխող վերնախավի ներկայացուցիչների փոփոխությունը: «Խորքային պետության» թուլացումը, սակայն, հնարավոր է կառավարման համակարգի կառուցվածքային փոփոխության և կադրերի օպտիմալացման ճանապարհով:
- «Թավշյա» հեղափոխությունից ակնկալվող արդյունքների շարքում պետք է կարևորվի լեգիտիմության ինստիտուցիոնալացումը, քանի որ տեղեկատվական դարաշրջանում խարիզմատիկ առաջնորդությունը հնարավոր չէ երկարատև պահպանել: Տեղեկատվական հոսքերն այնքան մեծ են, որ ամեն վայրկյան նոր ազդակներ են ուղղորդվում դեպի հասարակություն, որոնք, լինեն տեղեկատվություն, թե ապատեղեկատվություն, միևնույն է, ազդում են հասարակական գիտակցության վրա: Արդի շրջանում ՀՀ-ում քաղաքական արժեքները հիմնականում ձևավորվում են սոցիալական ցանցերի միջնորդությամբ, և դրանք քաղաքացիների մոտ ամրապնդում են համապատասխան վերաբերմունք և վարքագիծ: Այս պայմաններում անհնար է մշտապես պահպանել խարիզմատիկ առաջնորդությունը: Խարիզմատիկ առաջնորդի կերպարը, ժամանակի ընթացքում և իրավիճակային հանգամանքներից ելնելով, կարող է կորցնել իր միարժեքությունը և քաղաքական նշանակությունը: Հետևապես՝ որքան արագ է խարիզման վերածվում ինստիտուցիոնալ լեգիտիմության, այնքան ավելի արագ են հաղթահարվում ճգնաժամերը, և պետությունը հենվում է ոչ թե անձերի, այլ ինստիտուտների վրա: Այս դեպքում ևս քաղաքական գործընթացում քաղաքական խոսույթի և քաղաքական գործողությունների ներդաշնակությունը կարող է դառնալ ՀՀ-ում ժողովրդավարական քաղաքական մշակույթի կայացման և քաղաքական համակարգի կայունության հիմնասյուներից մեկը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. **Օրդուխանյան Է.**, Քաղաքական մշակույթը Հայաստանում. էվոլյուցիա և միտումներ: Երևանյան էսքիզ հրատ., Երևան, 2020, 392 էջ:
2. **Օրդուխանյան Է.**, **Շիրինյան Լ.**, **Սուքիասյան Հ.**, Հարավային Կովկասը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում: Լիմուշ հրատ., Երևան, 2018, 136 էջ:
3. **Օրդուխանյան Է.**, **Սուքիասյան Հ.**, Քաղաքական մշակույթի առանձնահատկությունները Հայաստանում: Լուսաբաց հրատ., Երևան, 2012, 94 էջ:
4. **Օրդուխանյան Է.**, Իշխանություն և ընդդիմություն. քաղաքական խոսույթի վերլուծություն: Լիմուշ հրատ., Երևան, 2010, 228 էջ:
5. **Ordukhanyan E.**, The Consociational Theory And Challenges To Democratization In South Caucasus Plural Societies. International Journal od Scientific and Technology Research, volume 9, Issue 01, January 2020, pp. 2276-2282.
6. **Ordukhanyan E.**, A Comparative Study of Political Process: Theoretical and Methodological Issue. WISDOM, 12(2), 2019, pp. 39-50.
7. **Ordukhanyan E.**, The Peculiarities Of Democratization In Post Soviet Countries Current Situation And Trends. International Journal od Scientific and Technology Research, volume 8, Issue 11, November 2019, pp. 818-821.
8. **Ordukhanyan E.**, The Impact Of Voter Turnout And Peculiarities Of Elections In Post-Soviet Armenia. International Journal od Scientific and Technology Research, volume 8, Issue 11, November 2019, pp. 1502-1509.
9. **Օրդուխանյան Է.**, Մշակույթի դերը «փափուկ ուժի» միջոցով հարավ-կովկասյան բազմական հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրարկման գործում: Պատմություն և քաղաքականություն, գիտական հանդես, թիվ 3(4), Երևան, 2019, էջ 140-159:
10. **Ordukhanyan E.**, The Difficulties and Prospects of Parliamentary Culture Development in Post-Soviet Armenia. International Journal of Progressive Sciences and Technologies (IJPSAT) - July 2019 Vol. 15, No. 2, 2019, pp. 119-126.
11. **Ordukhanyan E.**, **Kumar Gupta S.**, **Vural Uygun S.**, **Ilinich S.**, **Kumar R.**, Mahatma Gandhi: A Role Model in Revolutionary Management. IJRAR - International Journal of Research and Analytical Reviews (IJRAR), Volume. 6, Issue 2, June 2019, pp. 993-998.

12. **Ordukhanyan E.,** A Comparative Analysis of Theoretical and Methodological Foundations of Political Culture. WISDOM, 12(1), 2019, pp. 38-47.
13. **Ordukhanyan E.,** The Role of Participatory Culture in The Armenia's "Velvet" Revolution. International Journal of Progressive Sciences and Technologies (IJPSAT) - June 2019 Vol. 15, No. 1, 2019, pp. 170-179.
14. **Օրդուխանյան Է.,** Քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալները Հայաստանի Առաջին Հանրապետությունում: Փիլիսոփայությունը արդի աշխարհում, գիրք VIII: ՀՀ ԳԱԱ ՓՍԻԻ, Եվրոպրինտ հրատ., Երևան, 2018, էջ 313-322:
15. **Ordukhanyan E.,** Evaluating Political Regime through Discourse Measurement of Political Culture: The Case of the Republic of Armenia. Armenian Journal of Political Science 2(7) 2017, pp. 31-56.
16. **Ордуханян Э.,** Особенности политической культуры при постсоветских интеграционных и демократизационных процессах. Вестник Ереванского университета. Международные отношения, Политология № 2 (23), Изд. ЕГУ, 2017, стр. 58-66.
17. **Ordoukhanian E.,** Le problème relationnel entre le discours politique et la culture politique. Փիլիսոփայությունը արդի աշխարհում; գիրք 7: ՀՀ ԳԱԱ ՓՍԻԻ, Եվրոպրինտ հրատ., Երևան, 2017, էջ 264-273:
18. **Օրդուխանյան Է.,** Արցախյան խնդրի խոսութային վերլուծությունը ՀՀ կուսակցությունների ծրագրերում: Փիլիսոփայությունը արդի աշխարհում գիրք 6: ՀՀ ԳԱԱ ՓՍԻԻ, Լիմուշ հրատ., Երևան, 2016, էջ 337-348:
19. **Ordukhanyan E.,** Assessing the Regimes of Post-Soviet Transformation Countries through Political Discourse: Possibilities and Challenges. Armenian Journal of Political Science, 2(3) 2015, pp. 55-72.
20. **Ордуханян Э.,** Проблемы активистской политической культуры в современной Армении. Պատմություն և հասարակագիտություն, Տարեգիրք N 1: ՀՊՄՀ, Երևան 2015, էջ 286-303:
21. **Օրդուխանյան Է.,** Արդի Հայաստանը Հանթինգթոնի «քաղաքական կարգի» պրոյեկցիայի լույսի ներքո: Քաղաքագիտության հարցեր 2015. Հանթինգթոնը և արդի քաղաքագիտական խոսույթը: ՀՀ ԳԱԱ ՓՍԻԻ, Երևան, 2015, էջ 48-68:
22. **Ordukhanyan E.,** Dyskurs polityczny we wspgłczesnej Armenii. Analiza Porgwnawcza. Armenia i Ggrski Karabach w procesach transformacji społecznej i politycznej, Biblioteka Instytutu Polsko-Rosyjskiego nr 5, Wrocław, 2014, str. 82-97.
23. **Ordukhanyan E.,** Problemy kształtowania się kultury politycznej w Armenii i możliwości ich pokonania. Armenia i Ggrski Karabach w procesach

transformacji społecznej i politycznej, Biblioteka Instytutu Polsko-Rosyjskiego nr 5, Wrocław, 2014, str. 67-82.
24. **Օրդուխանյան Է.**, Ընտրական ինստիտուտի արդյունավետության խնդիրները հետխորհրդային Հայաստանում: Հայկական քաղաքագիտական հանդես 1(1), Երևան, 2014, էջ 56-71:
25. **Օրդուխանյան Է.**, Գլոբալացումը և ՀՀ արդիականացման որոշ տեսանկյուններ: Փիլիսոփայությունը արդի աշխարհում: ՀՀ ԳԱԱ ՓՍԻԻ, Եվրոպրին հրատ., Երևան, 2013, էջ 148-156:
26. **Օրդուխանյան Է.**, Իշխանության և ընդդիմության փոխհարաբերությունները Հայաստանի արդիականացվող քաղաքական մշակույթում: Քաղաքագիտության հարցեր 2012. Քաղաքական արդիականացումը և ՀՀ քաղաքական գործընթացները: ՀՊՄՀ, Մանկավարժ հրատ., Երևան, 2013, էջ 171-185:
27. **Ordukhanyan E.**, Les particularités du discours politique et l'identité linguistique des groupes politiques en Arménie. Bulletin of Yerevan State Linguistic University "Bryusov" 1(21), Yerevan, 2012, pp. 318-322.
28. **Ордуханян Э.**, Политический дискурс как средство политической коммуникации. Философия, политика, культура. Институт философии РАН, Прогресс-Традиция, Москва, 2011, стр. 222-236.
29. **Օրդուխանյան Է.**, Քաղաքական մասնակցության ձևերը քաղաքական խոսույթի համատեքստում: Լրաբեր հասարակական գիտությունների, 3(623), Երևան, 2008, էջ 104-112:

ОРДУХАНЯН ЭМИЛЬ ГРАЧЬЯЕВИЧ

ЭВОЛЮЦИЯ ПОЛИТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ В ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени доктора политических наук по специальности 23.00.02 “Политические институты и процессы, международные отношения”.

Защита диссертации состоится 24 июля 2020 г. в 13^{00} на заседании 056 специализированного совета ВАК (адрес: г. Ереван, ул. А. Манукяна 1). С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию эволюции политической культуры в политических процессах постсоветской Армении, особенно на основе анализа политического дискурса. В результате использования нового метода отмечается, что с течением времени в Армении произошел положительный сдвиг в сторону полудемократического режима. Некоторые элементы партиципативной культуры, основанной на широком участии, стали преобладать в политической культуре, которая, при продолжительном процессе, могла бы обеспечить важные основы для формирования и развития гражданской культуры.

Гармония политического дискурса и политической деятельности в политическом процессе может стать одним из столпов развития демократической политической культуры в Армении, играющим ключевую роль в стабильности политической системы.

В первой главе проведен сравнительный анализ теоретико-методологических основ политической культуры. Делается утверждение о том, что со временем парадигма политической культуры обогатилась новыми научными разработками, которые отражают особенности изучаемых обществ в данное политическое время, основанные на их политической практике.

Сравнительный анализ теоретических и методологических основ политического процесса показал, что политический процесс представляет собой динамичное и нелинейное политическое явление. Со временем оно может подвергаться различным изменениям с учетом обстоятельств, которые могут прямо или косвенно влиять на него. В этом случае также необходимо учитывать особенности политического процесса,

обусловленного типом политической культуры как доминирующей модели в данном обществе.

Во второй главе политический дискурс рассматривается как средство политической коммуникации. Были также изучены проявления и использование политического дискурса в различных политических режимах. В результате сделана классификация политического дискурса по типам политических режимов. Был также предложен новый метод оценки политической культуры (дискурсивное измерение политической культуры - ДИПК), который является новым с точки зрения методологии проведения политических исследований.

В третьей главе был проведен комплексный сравнительный анализ процессов постсоветской интеграции и демократизации с использованием статистических данных международных престижных индексов, в результате чего были выявлены особенности политической культуры в постсоветских обществах.

Проблема политической стабильности в плюральных обществах Южного Кавказа была рассмотрена в контексте политической культуры. В связи с этим утверждается, что консоциональный подход может стать предпосылкой для демократизации и политической стабильности в плюральных обществах региона, если/когда сегменты сформируют элиты при развитии гражданской культуры.

В четвертой главе рассматриваются проблемы эффективности политического процесса. Утверждается, что для повышения эффективности политического процесса, стабилизации и модернизации политического порядка в Армении необходима институционализация. Также была рассмотрена динамика избирательного процесса и эффективность избирательного института в Армении. Хотя избирательные процессы важны для оценки демократизации в постсоветских странах, тем не менее, развитие многопартийной системы является ключевым вопросом для устойчивой государственности.

В пятой главе раскрываются предпосылки формирования политической культуры в Первой Республике Армении. Политический режим в (2017, 2018) Армении оценивается с использованием метода ДИПК посредством изучения и анализа политического дискурса. Изучены и выявлены трудности и перспективы развития парламентской культуры в постсоветской Армении. Армянская «бархатная» революция весной 2018 года была исследована как проявление политической культуры участия. Были выявлены и обоснованы основные причины революции, а также проанализированы процесс, методы и технологии, определены некоторые ожидаемые результаты от революции.

ORDUKHANYAN EMIL H.

THE EVOLUTION OF POLITICAL CULTURE IN POLITICAL PROCESSES OF THE REPUBLIC OF ARMENIA

Dissertation for the scientific degree of Doctor of Political Sciences on the specialty 23.00.02 – "Political Institutions and Processes, International Relations"

The defense of the dissertation will take place on July 24, 2020 at 13^{00} at the meeting of 056 specialized Council of HAC (address: 0025, A. Manukyan str. 1, Yerevan, YSU). The dissertation is available in YSU library.

SUMMARY

The dissertation is devoted to the study of political culture evolution in post-Soviet Armenia's political processes based especially on the political discourse analysis. As a result of new method usage, it is pointed out that in course of time, there has been a positive shift towards a semi-democratic regime in Armenia. Some elements of participatory culture have begun to prevail in political culture, which, if continued, could provide important foundations for the formation and development of civic culture.

The harmony of political discourse and political activities in political process may become one of the pillars for democratic political culture development in Armenia playing a key role for political system stability.

In **Chapter One**, the comparative analysis of theoretical and methodological foundations of political culture was carried out. It has been argued that in the course of time the paradigm of political culture has been enriched with new scientific developments that reflect the particularities of studied societies in given political time, based on their political practices.

The comparative analysis of theoretical and methodological foundations of political process has established that the political process is a dynamic and non-linear political phenomenon that may be subject to various changes over time, taking into account circumstances that may directly or indirectly influence it. In this case, it is also necessary to take into account the peculiarities of political process conditioned by the type of political culture as a dominant model in a given society.

In **Chapter Two,** the political discourse is explored as a means of political communication. The manifestations and use of political discourse in various political regimes were also studied. As a result, a classification of political discourse by types of political regimes is made. A new method for

assessing political culture (Discourse Measurement of Political Culture - DMPC) has also been put forward, which is new in terms of the methodology for conducting political research.

In **Chapter Three**, a comprehensive comparative analysis of post-Soviet integration and democratization processes was carried out, mostly based on statistical data usage of prestigious international indexes. As a result, the features of political culture in post-Soviet societies were revealed.

The issue of political stability in South Caucasus plural societies has been considered in the context of political culture. In this respect it has been argued that a consociational approach can be a prerequisite for democratization and political stability in the region's plural societies if/when segments' elites are formed in condition of civic culture development.

In **Chapter Four**, the problems of political process effectiveness are explored. It has been argued that in order to increase the political process effectiveness, to stabilize and modernize the political order in RA an institutionalization is needed. The dynamics of the electoral process and the efficiency of the electoral institute in Armenia were also examined. Although electoral processes are important for assessing democratization in post-Soviet countries, however, multi-party system development is a key issue to sustainable statehood.

In **Chapter Five**, the prerequisites of political culture formation in the First Republic of Armenia are revealed. The political regime in (2017, 2018) Armenia was assessed by the use of DMPC method through the study and analysis of political discourse. The difficulties and prospects for parliamentary culture development in post-Soviet Armenia have been studied and revealed. The Armenian “velvet” revolution in spring 2018 has been explored as a manifestation of participatory political culture. The main reasons for the revolution have been identified and substantiated. The process, methods and technologies of the revolution have been also analyzed. Some expected results of the revolution have been defined.